

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 21.04.2021թ. Հորեքշաբթի թիվ 16-17 (989-990)

Կգա օրը, եւ մենք կվերադառնանք Հայրենիք ...Լինի 106, թե էլի մի քանի տարի անց

Ապրիլի 24-ին երկիրը կխնկարկի Հայոց Մեծ Եղեռնի զոհերի՝ սուրբ ևահատակների հիշատակը

Պիտի կերտենք ևո՛ր արշալույս

Այն, ինչ տեղի ունեցավ 1915-ին ու դրանից առաջ եւ շարունակվեց մինչեւ 1923 թվականը, սկսվել էր 1878 թվականին, երբ միջազգային դիվանագիտության պատմություն մտավ Հայկական հարցը: Թուրքիան, օգտվելով առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հնարավորություններից, հղացավ մարդկային պատմության մեջ մինչ այդ չլսված, նույնիսկ իրենց՝ թուրքերի պատմության համար աննախադեպ հրեշավոր մի ծրագիր եւ ձեռնամուխ եղավ դրա պետականորեն կազմակերպված իրագործմանը՝ Հայկական հարցից ազատվել Հայաստանում հայ բնակչության ոչնչացմամբ, մեկընդմիջ տիրանալ հայ ժողովրդի պատմական հայրենիքին:


Յոթնամյա օգնությամբ ազատագրվել դեռևս 11-րդ դարից Առաջավոր Ասիա եւ Հայաստան ներխուժած սելջուկ-թուրքերից... Սկսած 1722 թ. Դավիթ Բեկի ապստամբության օրերից, մասնավորապես արեւելահայոց մեջ ձեւավորվեց ռուսական կողմնորոշումը: Հայության մի զգալի մասն էլ ուներ արեւմտյան (եվրոպական) կողմնորոշում: Երկարատե քաղաքական դեգերումներից հետո, վերջապես, 1878-ին կարծես թե «հասանք» մեր ուզածին. մեր դատը հանձնված էր օտար բարձր տայաներին, մտել էր օրակարգ... Շուրջ 40 տարի մեր «հովանավորները» առևտուր արեցին, եւ բոլորն էլ ինչ-որ մի բան շահեցին՝ բացի մեզանից: Ռուս-թուրքական պատերազմները հայոց հույսը միշտ վառ էին պահում, սակայն դա միայն Ռուսաստանին ձեռնտու հետեւանքներ էր ունենում: Ի վերջո, Հայկական հարցի «մենաշնորհը» Ռուսաստանին իր ձեռքը վերցրեց: Սակայն Ռուսաստանին Հայաստանը պետք էր առանց հայերի: Տնտեսական տեսակետից ձեռնտու էր Հայաստանի բնիկ բնակչության արքայությունը եւ ռուսներով բնակեցումը: Ռուսաստանի քաղաքական շահը պահանջում էր խոչընդոտել Արեւմտյան Հայաստանի ազատագրությանը, որպեսզի վերջնականապես ձուլեր, յուրացներ, սեփականացներ 1828-ից իրեն անցած Արեւելյան Հայաստանը...

Տարիներ հետո «հայր» Ստալինը պիտի ասեր՝ չկա մարդը, չկա պրոբլեմը: Ֆյուրերը Հիտլերը պիտի ավելացներ՝ ո՞վ է այսօր հիշում հայկական կոտորածները: Բայց իրենք՝ թուրքերը, արդյո՞ք բավականաչափ հիմքեր ունեին մտածելու, որ մնալու են անպատիժ: Եվ արդյո՞ք հայերի ցեղասպանության համար ողջ պատասխանատվությունը ընկնում է միայն Թուրքիայի վրա, թե՞ կան նաեւ մեղսակիցներ: Կայգերական Գերմանիա՞ն... Ռուսաստան՞ը... Անգլիա՞ն... Առայժմ մեզ անծանոթ են եվրոպական պետությունների, Ռուսաստանի դիվանագիտական խարդավանքների ու խաղերի բոլոր մանրամասները, որ հիմքեր դառնային ուղղակի մեղադրականի, Հայկական հարցի պատմության՝ 1915-ին նախորդած 37 տարիների ընթացքում: Սակայն տարրական տրամաբանությունը մեզ հուշում է, մանավաճ, երբ համադրում ենք պատմական իրադարձությունները եւ հայտնի բազմաթիվ փաստեր, որ եւ եվրոպական պետությունները, եւ Ռուսաստանը իրենց քաղաքական շրջապատությունով այնուամենայնիվ նպաստեցին Թուրքիայի ոճրագործ դիրքորոշմանը...

Հիշենք 1914-ին Պետական Դումայում դեպուտատ Մարկովի ելույթը. «Ինչո՞ւ համար, իսկապես, Ռուսաստանը պետք է Կովկասի սահմանազխտւմ ստեղծի Մեծ Հայաստան: Դա ավելի վատ կլինի, քան Մակեդոնիան: Դա կստեղծի երկրորդ Լեհաստան: Հայերը լավ են ապրում, թե վատ, դա նրանց գործն է, իսկ մենք, եթե օժանդակենք ստեղծելու հայկական պետություն, նշանակում է՝ օժանդակենք կորցնել ամբողջ Կովկասը»:

19-րդ դարի վերջին, հատկապես՝ 90-ական թվականներից, հայ ազգային-քաղաքական կյանքը զարթոնք էր ապրում: Թվում է՝ ուր որ է պիտի արվեր ազգային-ազատագրական պայքարի մի վերջին հզոր ճիգ, եւ վերականգնվում էր Պատմական Հայրենիքը: Սակայն այդպես էլ չկարողացանք ի մի բերել մեր ուժերը, ապավինեցինք օտարին ու ոչ միայն չհասանք մեր ազգային բնականոն երազի իրականացմանը, այլեւ եղեռնագարկ եղանք, եւ ոսոխը տիրեց մեր հայրենիքի 9/10-րդ մասին...

տես՝ նաեւ էջ 12-14



1915-2021
Հայոց Ցեղասպանության
106-րդ տարելից

Հիշում եմ
եւ պահանջում

Պատմության դասը

Հայ ժողովուրդն այլեւս երբեք թույլ չի տա իր հետ վարվել այնպես, ինչպես 1915 թվականին ու դրանից առաջ, դրանից հետո... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի խաբվելու, որովհետեւ անվերադարձ թոթափել է մշուշը իր գիտակցության վրայից եւ այսուհետեւ ապավինելու է միայն ու միայն իր սեփական ուժին... Հայ ժողովուրդն այլեւս երբեք չի պարտվելու, որովհետեւ յուրացրել է արդեն պատմության մեծագույն դասը. *չկան լավ կամ վատ ժողովուրդներ, այլ կան միայն ազգային շահեր*, որոնք կարող են համընկնել կարճատեւ պահերի միայն, իսկ ընդհանրապես՝ գտնվում են հավերժական բախման ու պայքարի մեջ, եւ «հաղթում է ոչ թե արդարը, այլ՝ ուժեղը»:

1988-ի փետրվարին սկսվեց Հայոց համազգային շարժումը, որն առաջնորդեց մեզ Արցախի ազատամարտին եւ ազատագրմանը: Վստահ կարող ենք ասել, որ 2015 թվականի հունվարի 29-ին Համահայկական հռչակագրի հրապարակումից հետո մեկնարկեց Հայկական հարցի նոր փուլը՝ սկսվեց Հայոց համաշխարհային շարժումը: 2016 թ. ապրիլի 2-5-ը տեղի ունեցած քառօրյա պատերազմում մեր հերթական հաղթանակը էլ ավելի համախմբեց հայությանը, եւ պատմության տրամաբանությունը մեզ հուշում է, որ հեռու չէ նաեւ **Վերջնական հաղթանակը՝ Պատմական հայրենիքի** վերականգնումը՝ անկախ վերջին խայտառակ պատերազմի արդյունքներից, որ դուրս են տարրական տրամաբանության սահմաններից, չեն մնալու մեր պատմագրության որեւէ էջում եւ իսպառ ջնջվելու են նաեւ մեր հիշողությունից:



Հայկական հարց՝ համայն հայության եւ յուրաքանչյուր հայի գերագույն խնդիրը մինչեւ ի սպառ լուծում

Մայր Աթոռ

Վեհափառն ընդունեց բուժման մեկնող զինվորականներին

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Յայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հյուրընկալեց արցախյան երկրորդ պատերազմում տարբեր աստիճանների վիրավորումներ ստացած զինվորականների, որոնք առաջիկա օրերին կմեկնեն Ավստրիա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կենտրոնական Եվրոպայի Յայրապետական պատվիրակության նախաձեռնությամբ ու աջակցությամբ ստանալու անհրաժեշտ հետագա բժշկական օգնությունը եւ վերջույթների պրոթեզավորումը: Ծրագրի առաջին փուլում բուժում կստանան վեց զինվորականներ:



Հանդիպումը սկսվեց Տերունական աղոթքով, այնուհետեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Իզմիրյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն պրոֆեսոր Արմեն Զարչյանը Նորին Սրբությանը ներկայացրեց բուժման մեկնող զինվորականներին տեղեկացնելով, որ Յայաստանի տարբեր բուժաստատություններում արվել է առավելագույնը հայրենյաց պաշտպանների կյանքը փրկելու համար: Նա հաստատեց նաեւ, որ վիրավորումներ ստացած հայորդիները կարիք ունեն լրացուցիչ բուժման, որպեսզի նրանց ապաքինումը լինի առավել արդյունավետ ու ամբողջական: Այս առիթով նա իր երախտագիտությունը հայտնեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Կենտրոնական Եվրոպայի Յայրապետական պատվիրակությանը հայ համայնքի ջանքերով եւ միջեկեղեցական կառույցների օժանդակությամբ հայորդիների հետագա բուժումը Վիեննայի լավագույն բուժ-հիմնարկներում կազմակերպելու գործում:

Իր հայրական օրհնությունը փոխանցելով քաջարի զինվորականների՝ Ամենայն Յայոց Յայրապետն իր գնահատանքը բերեց նրանց՝ հայրենիքին մատուցած անձնվեր ծառայության եւ պատերազմի օրերին դրսևորած հերոսական ոգու եւ դիմակայության համար: Նորին Սրբությունը փաստեց, որ հայ ժողովրդի յուրաքանչյուր զավակ երախտապարտ է եւ ըստ ամենայնի արժեւորում է նրանց՝ ի սեր հայրենիքի դրսևորած անձնագրի քաջագործությունները: Ամենայն Յայոց Կաթողիկոսը հաստատեց նաեւ, որ Յայ Եկեղեցին անցնող տարիներին իր աջակցությունը ցուցաբերել է նախկինում վիրավորում ստացած հայրենյաց պաշտպաններին՝ ջանալով նպաստել նրանց բնականոն կյանքի վերականգնմանը:

Հանդիպմանը Վեհափառ Յայրապետը տեղեկացրեց, որ Մայր Աթոռը իր աշխարհասփյուռ թեմերի ու համայնքների միջոցով ամեն ջանք ի գործ պիտի դնի՝ շարունակելու ըստ անհրաժեշտության կազմակերպել տարբեր վիրավորումներ ստացած զինվորականների բուժումն արտերկրի բուժաստատություններում: Նորին Սրբության ցանկությունն էր, որ լրացուցիչ բուժումը օգնի հայորդիներին հաղթահարելու առկա խնդիրները եւ ապաքինվելով վերադառնալու ազգին եւ հայրենիքին իրենց ծառայությանը:

Վերջում Ամենայն Յայոց Կաթողիկոսը «Պատիվանից» աղոթքով օրհնեց զինվորականներին՝ մաղթելով ապաքինում եւ շուտափույթ վերադարձ հայրենիք:

Մշակութաերիտասարդական

Նոր միջավայր մարզերում

Կառավարությունը հաստատել է ՀՀ մարզերում մշակութային-ժամանցային միջավայրերի ապահովմանը, սոցիալական ձեռնբերության եւ նորարարական մոտեցումների զարգացմանը միտված միջոցառումների ծրագիրը, որի հիմնական շահառուները երիտասարդներն են:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը, ներկայացնելով նախագիծը, նշել է, որ դեռեւս նախորդ տարի ԿԳՄՍ նախարարության դրամաշնորհային ծրագրերի շրջանակում մրցութային կարգով ընտրվել են վեց կազմակերպություններ՝ մարզերում վերոնշյալ ուղղությամբ գործունեություն իրականացնելու համար: Այդ ծրագրերը նախ COVID 19 համավարակի, այնուհետեւ պատերազմի պատճառով չեն իրականացվել: Կառավարության հատկացրած շուրջ 110 մլն դրամ ֆինանսավորմամբ այս տարի այդ ծրագրերը կյանքի կկոչվեն:

Ծրագրերից առաջինով՝ Վանաձորում Լոռու մարզային գրադարանի մասնաշենքերից մեկում կբացվի եւ կգործի երիտասարդների ինքնագազացման, մշակութային-ժամանցային, նորարարական LOFT կենտրոն: Բազմաֆունկցիոնալ կենտրոնը կունենա տեխնիկական, տեխնոլոգիական եւ բովանդակային հագեցվածություն, որը մարզի երիտասարդության համար կապահովի ոչ ֆորմալ կրթության եւ մշակութաժամանցային միջավայր:

Երկրորդ ծրագրով՝ Արագածոտնի մարզի Բյուրական գյուղում կհիմնվի «Բյուրական մշակութային լաբորատորիան», որը ստեղծարար միջավայրում այլընտրանքային կրթական ծրագրերի, ուսուցման դասընթացների, համաժողովների, հանդիպումների եւ սեմինար-քննարկումների հնարավորություն կապահովի Արագածոտնի մարզի շուրջ 3000 երիտասարդների համար: **Երրորդ ծրագրով՝** «ԳՈՒՐ»



ԲԱՆ» մշակույթի կենտրոնը գյուղերում՝ հայ եւ օտարերկրացի արվեստագետների մասնակցությամբ կիրականացնի մոտ 24 մշակութային միջոցառում՝ նպաստելով հայ եւ օտարերկրացի արվեստագետների երկխոսությանը: Նախագծի առավելությունն այն է, որ չկա տարիքային եւ այլ սահմանափակում: Ստեղծվելու է համապատասխան միջավայր եւ տարածք, այլ կերպ ասած՝ արվեստանոց՝ ազատ ստեղծագործող արվեստագետների միջեւ երկխոսության, համատեղ գաղափարների մշակման եւ մշակութային արժեքների ստեղծման համար:

Չորրորդ ծրագրով՝ «Յայ Միասնության հասց» բարեգործական մշակութային հասարակական կազմակերպությունը Էջմիածնում կիրականացնի «Հզորացիր, հզորացրու» ծրագիրը, որի շրջանակում նախատեսվում է «Ֆրիլանս» հարթակի ստեղծում, սոցիալական ձեռնարկատիրության, վաճառքի իրականացման, մարկետինգի, գովազդի, անձնային աճի զարգացմանը միտված 40 երիտասարդների վերապատրաստում:

Հինգերորդ ծրագիր՝ «Լյուպին» երիտասարդական ՀԿ-ն Արագածոտնի մարզի Թալին համայնքում կիրականացնի «Ստեղծարար համայնք» նախագիծը, որի շրջանակում մարզային երիտասարդության համար կկազմակերպվեն դասընթացներ:

Վեցերորդ ծրագիր՝ Մասիսի երիտասարդական կենտրոնում կիրականացվի «Youth Lab» նախագիծը, որի նպատակը տարեկան մոտ 300 երեխայի ՏՏ ոլորտի ոչ ֆորմալ կրթության ապահովումն է: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը, անդրադառնալով որոշմանը, նշել է, որ հանրապետության մարզերում կամ մարզերի մեծամասնությունում չկան երիտասարդական կենտրոններ: Հաստատված միջոցառումները այդ խնդրի լուծման համատեքստում կատարված քայլեր են:

Կառավարության ղեկավարը հույս է հայտնել, որ ծրագիրը լավ արդյունքներ կունենա. «Պետք է հետեւել իրականացման ընթացքին, որպեսզի հիմքում դրված բովանդակությունը ճշգրիտ իրականացվի: Եվ ես հույս ունեմ, որ սրա արդյունքում, այսպես ասած, երիտասարդական միջավայրը մարզերում կփոխվի: Մենք այս ծրագիրը կփորձենք շարունակել՝ նաեւ հնարավորինս լայն տարածում տալու համար, որովհետեւ սա, առաջին հերթին, զարգացման ծրագիր է», - նշել է նա:

Նմանօրինակ նախագծերը շարունակական դարձնելու նպատակով կարելու են նաեւ մարզերից, մարզային կենտրոններից եւ տարբեր քաղաքային համայնքներից ներկայացված առաջարկները:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ապրիլի 24-ին՝ Յայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ

Ապրիլի 24-ին՝ Յայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի օրը, նախատեսված են մի շարք միջոցառումներ, որոնք կցուցադրվեն Յայաստանի հանրային հեռուստատեսությամբ:

Մասնավորապես՝ ապրիլի 23-ին՝ ժամը 22:30-ին՝ ջահերով երթի ավարտից հետո, Յայաստանի ազգային ֆիլիարմոնիկ նվագախմբի եւ Յայաստանի պետական ակադեմիական երգչախմբի, ինչպես նաեւ Յայաստանի եւ արտերկրի իրավիդյալ մեծակատարների մասնակցությամբ Ծիծեռնակաբերդի Յայոց ցեղասպանության հուշահամալիրում հնչելու է Զ. Վերդիի «Ռեքվիեմ»-ը: Ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը՝ ժամը 24:00-ին, Կոմիտասի անվ. կամերային երաժշտության տանը Գերմանիայից իրավիդված դիրիժոր Ալ. Իռադյանի ղեկավարությամբ Յայաստանի պետական կամերային նվագախմբի եւ «Յոլեր» պետական կամերային երգչախմբի մասնակցությամբ կհնչի Վ. Ա. Մոցարտի «Ռեքվիեմ»-ը: Հիշատակի միջոցառումները կամփոփվեն ապրիլի 24-ին՝ ժամը 19:15-ին, Կ. Ղեմիրճյանի անվ. մարզահամերգային համալիրում Յայաստանի ազգային սիմֆոնիկ նվագախմբի, Յայաստանի պետական կամերային երգչախմբի եւ Երեւանի պետական կամերային երգչախմբի մասնակցությամբ՝ Տ. Մանսուրյանի «Ռեքվիեմ»-ի կատարմամբ:





Համակարգ

Այց՝ Վանաձորի կրթական հաստատություններ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Կարեն Թռչունյանը** եւ նախարարության գլխավոր քարտուղար **Նահրի Հարությունյանն** աշխատանքային այցով եղել են Վանաձորի պետական համալսարանում: Կրթական գերատեսչության ներկայացուցիչները նախ այցելել են բուհի Ջորիկ Գեւորգյանի անվան հենակետային վարժարան, շրջել դասասենյակներով, ինչպես նաեւ հետաքրքրվել սաների եւ աշխատակիցների խնդիրներով: ԿԳՄՍ փոխնախարարը ծանոթացել է վարժարանի շենքային պայմաններին եւ լաբորատոր հնարավորություններին:



Շրջայցը շարունակվել է համալսարանում, որտեղ հյուրերը շրջել են համակարգչային լսարաններում եւ համալիր լաբորատորիաներում՝ ծանոթանալով դրանց տեխնիկական հագեցվածությանը:

ԿԳՄՍ ներկայացուցիչները հանդիպել են նաեւ բուհի գիտական խորհրդի անդամների հետ, որի ընթացքում ներկայացրել են հնարավորություններն ունեցել իրենց հուզող հարցերն ու առաջարկներն ուղղել հյուրերին: Հարցերը հիմնականում վերաբերել են սոցիալաբեթի բացակայությանը, հոգաբարձուների խորհրդի միտերի կազմակերպմանը եւ այլն: Համալսարանի գիտխորհրդի անդամներն իրենց մտահոգությունն են արտահայտել հենակետային վարժարանի շենքային պայմանների առնչությամբ:

Կարեն Թռչունյանի խոսքով՝

ցանկացած բուհի կարելի է ցուցաբերել որակյալ կրթություն: Այս համատեքստում փոխնախարարը կարելի էր անմանորինակ հանդիպումները եւ հետաքրքրվել գիտխորհրդի անդամների՝ բուհի զարգացման տեսլականով: Նա նաեւ կարելի էր բուհի զարգացման գործում ամենօրյա շարունակական աշխատանքները:

ՎԳՀ պրոֆեսորադասախոսական կազմից առաջարկ է հնչել բնական գիտությունների համար սահմանված անվճար տեղերի թիվն ավելացնել, որին ի պատասխան փոխնախարարը տեղեկացրել է, որ խնդիրը

գտնվում է նախարարության ուշադրության կենտրոնում՝ ներկայացնելով համապատասխան թվային տվյալներ, որոնք վերջին տարիներին ավելացել են:

Կարեն Թռչունյանը վստահեցրել է, որ նմանօրինակ հանդիպումներն այսուհետ լինելու են հաճախակի միտված առաջնահերթ խնդիրների վերահսկմանն ու դրանց հրատապ լուծմանը:

ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչները հյուրընկալվել են նաեւ Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում, որտեղ հյուրերին ներկայացվել են մարզի տեխնոլոգիական

զարգացմանն ուղղված «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի եւ կենտրոնի կողմից իրականացվող կրթական, հետազոտական եւ բիզնես ծրագրերն ու նախաձեռնությունները, ինչպես նաեւ ՎՏԿ-ի շահառու հանդիսացող ՏՏ եւ ինժեներական ընկերությունների գործունեությունը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մարզի տեխնոլոգիական ներուժն ու զարգացման հեռանկարները, ինչպես նաեւ տեխնոլոգիական լուծումների ներդրման միջոցով այլ ավանդակներում կենսական ոլորտների առաջընթացի հնարավորությունները:

Բանակ

Տարկետում՝ մեկ անգամ

Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունել է «Չինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը: Նոր կարգավորմամբ՝ միջին մասնագիտական կրթական ծագում ունեւնառությունը չավարտած, բայց ավարտական կուրսում սովորող եւ պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն ՀՀ կառավարության որոշմամբ մեկ անգամ կտրվի տերկետում մինչեւ ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը: Օրենքն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Երկարաձգման նպատակն է՝ հիմնական կրթության հիմքով միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած ուսանողներին հնարավորություն տալ ավարտել կրթական ծրագիրը, ստանալ համապատասխան որակավորում, որից հետո միայն զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:

Նշենք, որ գործող օրենքով նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողներին տարկետում տրվում է մինչեւ 19 տարեկանը:

Հավի առնելով, որ հիմնական կրթության հիմքով քոլեջների միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագիտություններ կան, որոնք ուսման տևողությունը 4 տարի է, առաջացել է նման կարգավորման անհրաժեշտություն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

«Էրազմուս+»

Մեկնարկել են տեղեկատվական առցանց վեբինարները

2021 թ. Էրազմուս+ առաջարկների ներկայացման մրցույթի շրջանակում մեկնարկել են Էրազմուս+ տեղեկատվական երկօրյա առցանց վեբինարները:

Միջոցառման նպատակն էր ներկայացնել Էրազմուս Մուևդուս եւ ժամ Մոնե գործողությունների դրամաշնորհային հնարավորությունները, տեղեկացնել մրցույթների մեկնարկի եւ մասնակցության պայմանների, ինչպես նաեւ տեղական, տարածաշրջանային եւ միջազգային գործընկերների հետ համագործակցության հնարավորությունների մասին: Վեբինարներին մասնակցել են ԵՄ պատվիրակության, բուհերի, հասարակական կազմակերպությունների, բիզնես ոլորտի եւ այլ շահառու կազմակերպությունների ներկայացուցիչներ:



Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են եկել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը** եւ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության վարչության ղեկավար **Գոնսալո Սեռանոն**: Նախարարի տեղակալի խոսքով՝ ԿԳՄՍ նախարարությունը բարձր է գնահատում Եվրոպական միության աջակցությամբ Էրազմուս+ ծրագրի միջոցով կրթության, սպորտի եւ երիտասարդության ոլորտներում Եվրամիության եւ հարեւանության երկրների միջեւ համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրերը:

Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ ներկայումս մշակվում է կրթության զարգացման ռազմավարությունը, որի նպատակներից մեկը բուհերի միջազգայնացումն է: Նրա հավաստմամբ՝ այդ համատեքստում մի շարք ծրագրեր, ինչպես, օրինակ, Էրազմուս+ BOOST ծրագրի շրջանակում Studyinarmenia.am կայքի ստեղծումը, բարձրագույն կրթության համակարգում աշխատանքի վրա հիմնված ուսուցման ներդրման եւ մի շարք այլ ծրագրեր մեծ ազդեցություն են գործում բարձրագույն կրթության ողջ համակարգի վրա:

«Կարծում եմ, որ սա հիմնալի գործիք է՝ համագործակցության ընդլայնման համար: Մենք պետք է ավելի ակտիվ լինենք ուսա-

նողների եւ բուհերի անձնակազմի շրջանում Էրազմուս+ ծրագրերի վերաբերյալ տեղեկատվությունը տարածելու եւ համագործակցության ծրագրերի մեջ բուհական հանրությանը ներգրավելու եւ աջակցելու գործում: Բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետներին ես կոչ եմ անում առավել ակտիվ ներգրավվել այդ ծրագրերում», - շեշտել է փոխնախարարը:

Արթուր Մարտիրոսյանը նաեւ շնորհակալություն է հայտնել Վրաստանից, Ուկրաինայից եւ Ղազախստանից ժամանած հյուրերին՝ Էրազմուս+ ծրագրի շրջանակում իրենց փորձով կիսվելու պատրաստականության համար:

Բրյուսելում տեղակայված Կրթության, առողիովիզուալ եւ մշակույթի գործադիր գործակալության ծրագրի պատասխանատու **Դեսպինա Քրիստադոնի** վեբինարի ընթացքում ներկայացրել է վերջերս վերափոխված Էրազմուս Մուևդուս գործողության մանրամասները եւ առաջարկվող ֆինանսավորման շրջանակը:

Միջոցառմանը մասնակցել են նաեւ Վրաստանի, Ուկրաինայի եւ Ղազախստանի բուհերի ներկայացուցիչները նպատակ ունենալով նպաստել այդ երկրների բուհերի միջեւ ժամ Մոնե ծրագրերի իրականացման փորձի փոխանակմանը եւ բացահայտել Էրազմուս+ ծրագրի շրջանակում բուհական համագործակցության նոր հեռանկարները:

Նշենք, որ երկու օրերի ընթացքում մասնակիցները հնարավորություն կստանան ավելի շատ գիտելիքներ ստանալ «Էրազմուս Մուևդուս գործողությունների պլան-2021» ծրագրի մասին, որի նպատակն է խթանել բուհերի գերազանցությունն ու միջազգայնացումը՝ համաձայն մշակված եւ ճանաչված մագիստրոսական ծրագրերի միջոցով: Միջոցառման մասնակիցները կտեղեկանան նաեւ Էրազմուս Մուևդուս համատեղ մագիստրոսական ծրագրերի միջոցով բուհերի կարողությունների զարգացման, ինչպես նաեւ ժամ Մոնե գործողությունների մասին, որոնք ուղղված են Եվրոպական միության ուսումնասիրությունների ոլորտում դասավանդմանն ու հետազոտության խթանմանը:

Հավելենք, որ Էրազմուս Մուևդուս գործողության շրջանակում հայաստանյան բուհերը կարող են բարձրացնել իրենց միջազգայնացման կարողությունները, արդիականացնել կրթական ծրագրերն ու դասավանդման պրակտիկան, մշակել նոր համատեղ մագիստրոսական ծրագրեր՝ հիմնվելով որակի ապահովման, հավատարմագրման, աստիճանների եւ կրեդիտների ճանաչման միջազգային փորձի վրա: ՀՀ բուհերը կարող են հանդես գալ եւ որպես ծրագրի համակարգող, եւ որպես ծեսավորված կոնսորցիումի գործընկեր հաստատություն:

Գեղինե ՀՈՎՅԱՆՆԻՍՅԱՆ

Մագիստրատուրա

Կառավարության որոշմամբ

Ընդունելություն՝ նոր մասնագիտություններով

ՀՀ կառավարությունը հաստատել է բարձրագույն ուսումնական հաստատությունների 2021/2022 ուսումնական տարվա՝ պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ անվճար, առկա ուսուցմամբ, մագիստրոսի կրթական ծրագրով ընդունելության տեղերը:

Մագիստրոսի կրթական ծրագրով անվճար, առկա ուսուցմամբ հատկացվել է 1391 տեղ, որից 1099-ը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններին: 101 տեղ հատկացվել է ՀՀ պաշտպանության նախարարությանը, այդ թվում՝ 40 տեղ արտերկրի ուսումնական հաստատություններում սովորելու համար: Մագիստրոսական 30 տեղ հատկացվել է Արցախի դիմորդներին, մնացած տեղերը բաշխվել են Հայաստանի Հանրապետությունում գործող միջպետական եւ օտարերկրյա բուհերի հայաստանյան մասնաճյուղերի, ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի, Կառավարման ակադեմիայի եւ միջպետական ծրագրերով ՀՀ-ում սովորող օտարերկրացիների միջև: Նախատեսվել է նաեւ 9 անվճար պահուստային տեղ:

Տեղերն ըստ մասնագիտությունների ձեւավորելիս հաշվի է առնվել շահագրգիռ կազմակերպությունների եւ բուհերի կողմից ներկայացված հայտերը: Նախապատվությունը տրվել է ճարտարագիտության, արդյունաբերության եւ տեխնոլոգիայի, ճարտարապետության եւ շինարարության, համակարգչային գիտություններին, ֆիզիկայի, կենսաբանության, գյուղատնտեսական գիտությունների եւ մաթեմատիկայի ոլորտների մասնագիտություններին:

Բարձրագույն ուսումնական հաստատությունների մագիստրատուրայում 2021/2022 ուսումնական տարում ընդունելություն կիրականացվի մի շարք նոր մասնագիտություններով. «Գեոմատիկա», «Ագրարային ճարտարագիտություն», «Գեոդեզիա եւ կադաստր», «Աշխարհագրական տեղեկատվական համակարգեր», «Մեքենասարքավորումների ճարտարագիտություն», «Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն», «Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ», «Ճշգրիտ գյուղատնտեսություն», «Պետական եւ ռազմական կառավարում», «Արհեստական բանականության համակարգեր», «Միջուկային տեխնոլոգիաների կառավարում», «Նորարարությունների տնտեսագիտություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում», «Մարքեթինգային հաղորդակցություններ», «Հանրային ծառայությունների բիզնեսի կազմակերպում եւ կառավարում», «Կիրառական վիճակագրություն եւ տվյալների գիտություն» եւ այլն:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Նախադպրոցական

Հաստատվել է օրինակելի կանոնադրությունը

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է նախադպրոցական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը, որը կիրառելի է լինելու ինչպես պետական եւ համայնքային, այնպես էլ ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար:

Սահմանվում է, որ նախադպրոցական ուսումնական հաստատությունը իրավաբանական անձ է, որը գործում է լիցենզիայի հիման վրա եւ իրականացնում է նախադպրոցական կրթական առնվազն մեկ տեսակի ծրագիր եւ (կամ) նախադպրոցական ծառայություններ: Այն ունի կնիք, ձեւաթուղթ, հաշվեկշիռ, բանկային հաշիվ, որտեղ հրապարակվում են հաստատության նախահաշիվը, ֆինանսական (ծախսերի)



հաշվետվությունները, հաստիքացուցակը, թափուր աշխատատեղերը, հայտարարությունները:

Նախադպրոցական հաստատությունում չեն թույլատրվում քաղաքական կամ կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախադպրոցական կրթական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական եւ սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների եւ ձեւերի ընտրության, ինչպես նաեւ նրանց կյանքի անվտանգության եւ առողջության պահպանման համար: Գործունեության նպատակը յուրաքանչյուր սանի, այդ թվում՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների՝ առավելագույն մասնակցության եւ նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է: Ազգային փոքրամասնությունների նախադպրոցական կրթությունը կարող է կազմակերպվել իրենց մայրենի կամ ազգային լեզվով՝ հայերենի պարտադիր ուսուցմամբ:

Համագործակցելով համայնքի եւ ընտանիքի հետ՝ հաստատությունը ապահովում է սաների ներդաստան զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելու եւ դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, հայրենի բնության, պատմության եւ ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական եւ ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

Հարունակությունը էջ 5

2 մլրդ 784 մլն 565 հազար դրամ լրացուցիչ ֆինանսավորում՝ գիտության ոլորտին

Կառավարության որոշմամբ գիտության ոլորտի ֆինանսավորումը կավելանա 2 մլրդ 784 մլն 565 հազար դրամով:

Նախագիծը ներկայացնող ԿԳՄՍ նախարարի տեղակալ ժաննա Անդրեասյանի զեկուցմամբ՝ ոլորտի ֆինանսավորման ավելացումը նախատեսված է երկու հիմնական ուղղությունների՝ թեմատիկ գիտական հետազոտությունների եւ գիտական ենթակառուցվածքի արդիականացման համար:

Ենթակառուցվածքներ եւ նոր սարքավորումներ

Նշված գումարից շուրջ 1 մլրդ 31 մլն 740.9 հազար դրամը նախատեսված է գիտական կազմակերպությունների եւ բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացման, սարքավորումների արդիականացման եւ միջազգային համագործակցության, ինչպես նաեւ ենթակառուցվածքների արդիականացման ծախսային ուղղության համար: Միջոցները հատկացվելու են բարձր արդյունավետությամբ աշխատող կազմակերպություններին՝ ժամանակակից գիտական լաբորատորիաների ու նոր սարքավորումների ձեռքբերման եւ այդ սարքավորումներով աշխատող անձնակազմի վերապատրաստման համար:

«Փորձարարական գիտությունների ոլորտում հետազոտությունների մրցունակ հենքի ապահովումը կնպաստի փորձարարական հետազոտությունների որակի բարելավմանը՝ հնարավորություն ստեղծելով նաեւ կիրառական հետազոտությունների համար, որը շատ կարեւոր է նաեւ տնտեսության զարգացմանը նպաստելու տեսանկյունից: Ծախսարդյունավետության տեսանկյունից էական է տարբեր կազմակերպությունների միջև կոնսորցիումների ձեւավորումը՝ ձեռք բերվող սարքավորումները համատեղ օգտագործելու նպատակով,- նշել է ժաննա Անդրեասյանը՝ ավելացնելով, որ հատկացումներ են նախատեսված նաեւ Գիտությունների ազգային ակադեմիայի տեխնիկական վերահսկման համար:

Թեմատիկ հետազոտություններ՝ առաջատար գիտաշխատողների խրախուսում

Գիտական թեմատիկ հետազոտությունների համար նախատեսված 1 մլրդ 638 մլն 424,5 հազար դրամը հնարավորություն կտա պայմանագրային թեմատիկ



հետազոտությունների թիվն ավելացնել 50-ով: Մասնավորապես՝ գիտական փորձաքննության արդյունքներով բարձր միավորներ հավաքած հետազոտությունները, որոնցում արտացոլված են գիտության ոլորտում առկա գաղափարները, ֆինանսավորում կստանան երկու տարով: Գումարը հատկացվելու է մրցույթի արդյունքում առավելագույն փորձագիտական միավորի՝ առնվազն 80 տոկոսը ստացած հայտերին:

Բացի դրանից՝ նախանշվում է մինչեւ երեք տարի ժամկետով գիտական խմբերի ձեւավորման 8 լրացուցիչ մրցույթային ծրագրի մեկնարկ, որը կարելու է բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտնականների խրախուսման համար:

«Գիտական խումբը պետք է ունենա արտերկրի հեղինակավոր գիտնական հանդիսացող խորհրդատու, իրականացնի հավակնոտ թեմայով հետազոտություն եւ տպագրի որակյալ գիտական աշխատանքներ միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում,- նշել է Ժ. Անդրեասյանը:

Ուղղություններից մեկն էլ առաջատար գիտաշխատողների խրախուսման մրցույթային ծրագիրն է, որով նախատեսվում է մինչեւ 5 տարի ժամկետով 50 դրամաշնորհի հատկացում: Այս պահին Հայաստանում գործող ըստ միջազգային չափանիշների առաջատար գիտնականները կարող են ձեւավորել մինչեւ 7 հոգանոց գիտական խմբեր. արտերկրի հեղինակավոր գիտնական գործընկերոջ ներառումը, հավակնոտ եւ բեկումնային գիտական հետազոտության առկայությունը, միջազգային գիտական հրապարակումը եւ միջազգային գիտական դրամաշնորհներին մասնակցությունը պարտադիր են:

գային գիտական դրամաշնորհներին մասնակցությունը պարտադիր են:

Առանցքային ուղղություն է նաեւ երկաթի հետազոտությունների մրցույթային 10 նոր ծրագրի մեկնարկը՝ ուղղված ՀՀ պաշտպանության եւ անվտանգության մակարդակի բարձրացմանը: Մինչեւ 2 տարի ժամկետով դրամաշնորհները կտրվեն ռազմական ուղղվածության հետազոտական թեմաներով հայտերին: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ռազմարդյունաբերության կոմիտեի հետ համագործակցությամբ:

Տնտեսության զարգացման տեսանկյունից շատ կարեւոր է կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված մրցույթային ծրագրերի իրականացումը, որոնց թիվը եւս կավելանա 10-ով: Դրամաշնորհները կտրամադրվեն տնտեսության կարիքներից բխող կիրառական հետազոտություններով զբաղվող գիտական խմբերին՝ մասնավոր հատվածի համաֆինանսավորման պայմանով: Ծրագիրն իրականացվելու է էկոնոմիկայի նախարարության հետ համագործակցությամբ:

Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ նոր ծրագրերը թույլ կտան առավել արդյունավետ օգտագործել գիտական ներուժը՝ միաժամանակ խթանելով երիտասարդների ներգրավումը գիտության ոլորտում:

Գիտության ոլորտի ֆինանսավորման որոշման համար հիմք են հանդիսացել գիտության զարգացման թեմայով ՀՀ վարչապետի մոտ տեղի ունեցած շարունակական խորհրդակցություններն ու այդ շրջանակում տրված հանձնարարականները:

Նիստը վարող ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդգծել է, որ Հայաստանում շատ երկար տարիներ քննարկվում է գիտության ֆինանսավորման թեման, խնդիրն այսօր էլ Կառավարության ուշադրության կենտրոնում է:

«Միայն գումար ավելացնելն ամենեւին չի նշանակում որոշակի արդյունքի հասնել: Շատ կարեւոր է հավաստիանալ, որ կա ինստիտուցիոնալ հիմք՝ հատկացվող միջոցների նպատակային արդյունքի ստեղծման համար,- նշել է վարչապետը՝ ավելացնելով, որ Կառավարությունը կրթության եւ գիտության համակարգի զարգացումը դիտարկում է ընդհանրության մեջ՝ նախադպրոցական ոլորտից մինչեւ գիտություն:

Ռազմավարություն

Ասպիրանտուրա

Կրթության զարգացման 2021-2030 թվականների պետական ծրագրի մշակման աշխատանքները շարունակվում են

Կհանձնեն պահանջվող բոլոր քննությունները

Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2021-2030 թվականների պետական ծրագիրը մշակելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբը գումարել է իր հերթական նիստը: Աշխատանքային խմբում ընդգրկված են ՀՀ ԿԳՄՍ նախարարը, նախարարի տեղակալները, ինչպես նաև նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

տանքները վերջին ամիսներին շարունակվել են, եւ ներկայում փաստաթուղթը վերանայվում է եւ լրամշակվում՝ հաշվի առնելով պատերազմով ու համավարակով պայմանավորված նոր իրողությունները: Ըստ Վահրամ Դումանյանի՝ քննարկված մի շարք առանցքային հարցերի արդյունքում կսահմանվեն նոր գերակայություններ եւ մարտահրավերներ: «Ամեն ինչի հիմքում ընկած է կրթությունը, որը մեր անվտանգության եւ ճիշտ մտածողության հիմքն է: Հետպատերազմյան վիճակում մեր գերակայությունները պետք է փոխվեն՝ գերիզուր ինտելեկտուալ մտածողությամբ երկիր դառնալու հե-

ռանկարով», - նշել է նախարարը: Քննարկման ընթացքում նշվել է, որ փաստաթղթի ներկա տարբերակում, որպես կրթության միջնաէջ 2030 թվականի զարգացման թիրախներ եւ ռազմավարական նպատակներ, նախանշվել են համընդհանուր հասանելի, սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծումը, կրթության արդյունավետության եւ արդյունավորության բարձրացումը, հայկական կրթական ծառայությունների եւ արտադրանքի միջազգայնացումն ու արտահանումը, ինչպես նաև ներկա մարտահրավերներով պայմանավորված՝ նոր գերակայությունների սահմանման անհրաժեշտությունը:

2021-22 ուսումնական տարում ասպիրանտուրայի ընդունելությունն անցկացվելու է համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի N 238-Ն որոշմամբ սահմանված ասպիրանտուրայի ընդունելության եւ ուսուցման, դոկտորանտուրայի եւ հայցորդության ձեւակերպման կարգի պահանջների, այսինքն՝ մինչ կորոնավիրուսային համավարակը եղած կարգավորումներով: Ըստ այդմ ասպիրանտուրայի դիմորդները քննություն կհանձնեն «Օտար լեզու» եւ «Ինֆորմատիկա եւ տեղեկատվատեխնոլոգիաների հիմունքներ» առարկաներից՝ ընդունելության համար ներկայացնելով ատեստավորման վկայական կամ դրան համապատասխան տեղեկանք:

ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության վարչության ծրագրերի իրականացման եւ գնահատման բաժնի պետ Էդգար Ալեքսանյանի տեղեկացմամբ՝ համավարակի տարածման ռիսկով պայմանավորված՝ անցյալ՝ 2020-21 ուսումնական տարվա ասպիրանտուրայի ընդունելության կարգում կատարվել էր փոփոխություն՝ ժամանակավորապես հանվել էր «Օտար լեզու» եւ «Ինֆորմատիկա եւ տեղեկատվատեխնոլոգիաների հիմունքներ» առարկաներից ատեստավորման պահանջը: Նշված փոփոխությունը տարածվում էր բացառապես 2020-21 ուսումնական տարվա ընդունելության գործընթացի վրա:

ԿԳՄՍ նախարարությունն ամիսներ առաջ ՀՀ կառավարության e-draft.am միասնական տեղակայված հարթակում հանրային քննարկման էր ներկայացրել մի նախագիծ, որով առաջարկվում էր այս ուսումնական տարվա համար եւս «Օտար լեզու» եւ «Ինֆորմատիկա եւ տեղեկատվատեխնոլոգիաների հիմունքներ» առարկաների քննությունները չեղարկել՝ թողնելով միայն մասնագիտական քննությունը:

շարունակությունը էջ 6

Հաստատվել է օրինակելի կանոնադրությունը

սկիզբը՝ էջ 4

Նախադպրոցական կրթական ծրագրերում եւ ծառայություններում, որպես անբաժանելի մաս, կարող են ներառվել՝

- ուսումնամեթոդական, փորձարարական, հետազոտական աշխատանքները,
- մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործումը,
- սաների խնամքի, առողջության եւ անվտանգության պահպանումը, սննդի կազմակերպումը՝ ըստ առողջապահական նորմերի,
- սաների տրանսպորտային կազմակերպված փոխադրումները:

Երեխայի ընդունելությունը նախադպրոցական ուսումնական հաստատություն, անկախ կազմակերպական-իրավական ձեւից, իրականացվում է ծնողի (օրինական ներկայացուցչի) դիմումի, հաստատության ու ծնողի միջեւ ստորագրված պայմանագրի հիման վրա՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններն ըստ տեսակների լինում են՝

- մտուր՝ 0-3 տարեկանների ընդգրկմամբ,
- մտուր - մանկապարտեզ՝ 0-6 տարեկանների ընդգրկմամբ,
- մանկապարտեզ՝ 3-6 տարեկանների ընդգրկմամբ,
- նախակրթարան՝ 5-6 տարեկանների ընդգրկմամբ,
- կենտրոն՝ 0-6՝ նախադպրոցական բոլոր կամ որոշ տարիքային խմբի ընդգրկմամբ:

Ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից: Տարիքային խմբերի ձեւավորումը եւ երեխաների տեղափոխումը այլ տարիքային խմբեր կատարվում են յուրաքանչյուր տարվա օգոստոսի 20-ից մինչեւ 30-ը: Ազատ տեղերը համալրվում են ամբողջ տարվա ընթացքում, խմբերի առավելագույն խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը: Աշխատանքային ռեժիմը, երեխաների մնալու տեղությունը սահմանում է հաստատության հիմնադիրը: Մանկավարժական եւ սպասարկող անձնակազմերը տարին 1 անգամ ենթարկվում են բժշկական զննության: Աշխատանքի ընդունվում են այն անձինք, որոնց որակավորումն ու աշխատանքային ստաժը համապատասխանում է լիազորված մարմնի սահմանած բնութագրերին:

Օրինակելի կանոնադրությամբ սահմանված են տնօրենի, փոխտնօրենի, մեթոդիստի, դաստիարակի, երաժշտական ղեկավարի եւ այլ աշխատողների պարտականություններն ու պատասխանատվությունը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն



Ատեստավորում

Պարտադիր եւ կամավոր՝ հիմնական տարբերությունները

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների կամավոր ատեստավորման փորձնական ծրագրի հայտագրման փուլը կմեկնարկի 2021 թվականի մայիսից՝ առցանց եղանակով:

Կամավոր ատեստավորմանը մասնակից ուսուցիչների թեստավորման գործընթացը տեղի կունենա աշնանը: Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի տեղեկացմամբ՝ հայտագրման եւ թեստավորման հստակ ժամկետները եւ ընթացակարգերը կհայտարարվեն լրացուցիչ: Կամավոր ատեստավորման գործընթացի ավարտին 80 եւ ավելի միավոր հավաքած ուսուցիչները կստանան աշխատավարձի հավելավճար՝ իրենց աշխատավարձի 30-50 տոկոսի չափով:

Նախարարի տեղակալի խոսքով՝ այս տարի կամավոր ատեստավորման համար դիմելու հնարավորություն կունենան 7-12-րդ դասարաններում «Հայոց լեզու», «Գրականու-

թյուն», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» եւ «Աշխարհագրություն» առարկաներ դասավանդող ուսուցիչները: Հետագա տարիներին ծրագրում կընդգրկվեն նաև մյուս առարկաների, ինչպես նաև մնացած դասարաններում դասավանդող ուսուցիչները:

Կամավոր ատեստավորման արդյունքում 90 տոկոս եւ ավելի միավոր ստացած ուսուցիչները կստանան 50 տոկոս հավելավճար, 80-89 տոկոս միավոր հավաքելու դեպքում ուսուցիչները կստանան 30 տոկոս հավելավճար: 60-79 տոկոս արդյունք ապահոված ուսուցիչները կհամարվեն ատեստավորումն անցած՝ աշխատավարձի պահպանմամբ, այսինքն՝ նրանք հավելավճար չեն ստանա: Մինչեւ 59 տոկոս արդյունքի դեպքում ուսուցիչ նախկին աշխատավարձը կպահպանվի, նրան կառաջարկվի պարտադիր վերատեստավորում մեկ տարի անց:

«Շատ կարեւոր է, որ ատեստավորման գործընթացը կամավոր է, որին ուսուցիչները պետք է մասնակցեն իրենց նախաձեռնությամբ: Նրանք պետք է առցանց դիմում-հայտ լրացնեն, մասնակցեն իրենց դասավանդած առարկայի թեստավորմանը եւ, ըստ իրենց հավաքած միավորների, հավելավճարի հնարավորություն ստանան», - նշել է նախարարի տեղակալը՝ ավելացնելով, որ ծրագրի ներդրմամբ նախարարությունը որեւէ ուսուցիչ պատժելու նպատակ չի հետապնդում:

«Նպատակը լավ պատրաստված եւ մասնագիտական զարգացման բարձր մակարդակ ունեցող ուսուցիչներին խրախուսելն է, նրանց հավելյալ վարձատրություն տալը: Փորձնական ատեստավորումը կարող է նաև նպաստել վերապատրաստման ավելի փիրախային ծրագրերի իրականացմանը», - փաստել է Ժ. Անդրեասյանը:

շարունակությունը էջ 10

Կհանձնեն պահանջվող բոլոր քննությունները

սկիզբը՝ էջ 5

Հետագայում, սակայն, հաշվի առնելով ինչպես հանրային եւ մասնագիտական շրջանակների առաջարկները, այնպես էլ նախարարության եւ շահագրգիռ գիտական կազմակերպությունների հետ տեղի ունեցած քննարկումները, որոշվել է նախատեսված բոլոր քննությունները կազմակերպել: Դր կառավարության պահուստային ֆոնդից ԿԳՄՍ նախարարությանը 50 մլն դրամ է հատկացվել՝ ասպիրանտուրայի քննությունների կազմակերպման համար: Ըստ այդմ, էդգար Ալեքսանյանի ընդգծմամբ, ասպիրանտուրայի այս տարվա դիմորդները պետք է հանձնեն պահանջվող բոլոր քննությունները:

Էդգար Ալեքսանյանը նշում է, որ ըստ մասնագիտությունների՝ պետության կողմից ասպիրանտուրայի ուսման վարձի փոխհատուցմամբ անվճար տեղերը հաստատելու վերաբերյալ նախագիծը ԴՀ կառավարության հաստատմանը կներկայացվի առաջիկայում:

Հավելենք, որ համաձայն գործող կարգի՝ մրցութային կարգով ասպիրանտուրա են ընդունվում մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կրթական աստիճան, իսկ բժշկական մասնագիտություններով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորում ունեցողները:

Ասպիրանտուրա ընդունվելու համար անձի կամ նրա լիազորած անձի կողմից դիմումը տրվում է հաստատության ղեկավարի անունով՝ ներկայացնելով հետևյալ փաստաթղթերը՝

- բակալավրի եւ մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի կամ օրդինատորի դիպլոմի ու դրանց հավելվածների պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
- «Օտար լեզու», «Ինֆորմատիկա եւ տեղեկատվահաղորդակցական հիմունքներ» առարկաների ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շենոմվ՝ բակալին գնահատմամբ),
- ընտրված մասնագիտությանը հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճենը կամ գիտական ռեֆերատ՝ առնվազն 20 տպագրական էջի սահմանում,
- ինքնակենսագրություն եւ երեք լուսանկար (3x4 չափսի),
- քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում):

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Քննարկվել են առանցքային մի շարք հարցեր

Մասնագիտական կրթության եւ ուսուցման զարգացման ազգային խորհուրդը (ՄԿՈՒԶԱԽ) գումարել է իր հերթական նիստը, որը վարել է ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Խորհրդի կազմում ընդգրկված են ԴՀ ԿԳՄՍ, Աշխատանքի եւ սոցիալական հարցերի, Էկոնոմիկայի, Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների, Ֆինանսների նախարարությունների, ինչպես նաեւ սոցիալական գործընկերության կառույցների՝ գործատուներին ներկայացնող կազմակերպությունների եւ արհեստակցական միությունների ներկայացուցիչներ:

Նիստի օրակարգում ընդգրկված էին 2021 թվականին մշակման ենթակա 12 եւ վերանայման ենթակա 20 նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների, ինչպես նաեւ մշակման ենթակա 9 ՆՄՄԿ ուսումնական ձեռնարկի եւ ուսումնամեթոդական նյութի ընտրության եւ հաստատման հարցերը: Դրանք զեկուցել է ՄԿՈՒ Զարգացման ազգային կենտրոնի տնօրեն Տաթևիկ Գասպարյանը: Քննարկման արդյունքում ներկայացված ցանկից հստակեցվել, ընտրվել եւ ընդունվել են մշակման եւ վերանայման ենթակա չափորոշիչները, ձեռնարկները եւ ուսումնամեթոդական նյութերը:

Նիստի ընթացքում առաջարկ է հնչել պատերազմի եւ համավարակի հետեւանքով աշխատաշուկայում ծագած նոր խնդիրները լուծել կարճաժամկետ ուսուցման ծրագրերի եւ վերապատրաստումների միջոցով: Ի պատասխան ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ եթե Հայաստանի Գործատուների հանրապետական միությունն իրականացնի աշխատուժի կարիքի գնահատում եւ առաջարկ ներկայացնի, թե հատկապես որ ուղղությունների վրա պետք է շեշտադրում անել, ապա ԿԳՄՍ նախարարությունն ուսումնական հաստատությունների միջոցով կիրականացնի կարճաժամկետ ուսուցման դասընթացներ: Ըստ փոխնախարարի՝ այնուհետեւ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ հնարավոր կլինի զբաղվածության ծրագրերն



ուղղորդել՝ ըստ այդ առաջնահերթությունների եւ ուղղվածությունների: Նիստի հաջորդ հարցերը վերաբերել են «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը Հայաստանում. ՄԿՈՒ համակարգում պրակտիկայի բարելավում» եւ «Աշխատանքի վրա հիմնված ուսումնառության հայկական մոդելի՝ ՆՄԿՈՒ հաստատության կողմից առևտրային գնահատում» հայեցակարգերին, որոնց նախագծերը խորհրդի անդամներին ներկայացրել են ԿԳՄՍՆ Նախնական/արհեստագործական եւ միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանը եւ Եվրոպական կրթական հիմնադրամի փորձագետ Արայիկ Նավոյանը:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ **մայիսի 4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա **մայիսի 6-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Սյունիքի մարզի Ներքին Խնձորեսկի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 81-28-45 հեռախոսահամարով:

Պարտադիր եւ կամավոր՝ հիմնական տարբերությունները

սկիզբը՝ էջ 5

Պարտադիր ատեստավորումն աշխատավարձի բարձրացում չի ենթադրում, կամավորը ենթադրում է

Անդրադառնալով այն հարցին, թե որոնք են կամավոր եւ հեթոթական պարտադիր ատեստավորման տարբերությունները, նախարարի տեղակալը նշում է, որ կամավոր ատեստավորման փորձնական ծրագրին զուգահեռ՝ շարունակվելու է ուսուցիչների պարտադիր ատեստավորումը, որը «*Հանրակրթության մասին*» ՀՀ օրենքի պահանջ է: Ըստ այդմ՝ զբաղեցրած պաշտոնին ուսուցչի համապատասխանությունը որոշելու նպատակով 5 տարին մեկ անգամ յուրաքանչյուր ուսուցչի համար իրականացվում է հեթոթական ատեստավորում, որը պարտադիր է հանրակրթական դպրոցներում աշխատող բոլոր ուսուցիչների համար: Ժամանա Անդրեսայանի տեղեկացմամբ՝ վերանայվել է ուսուցիչների պարտադիր ատեստավորման համակարգը՝ դարձնելով ավելի բաց եւ մասնակցային, սակայն այն սկզբունքորեն տարբերվում է կամավոր ատեստավորումից: Հեթոթական կամ պարտադիր ատեստավորումն իրականացվում է որոշակի փաստաթղթեր ներկայացնելու միջոցով՝ ավտոմատ կերպով. հեթոթական ատեստավորման համար ուսուցիչը ներկայացնում է փաստաթղթեր, որ անցել է վերապատրաստում, հանդիսանում է որեւէ դպրոցում աշխատող ուսուցիչ, ունի համապատասխան մասնագիտական որակավորում եւ այլն: Այսինքն՝ հեթոթական պարտադիր ատեստավորումը մասնագիտական գիտելիքների ստուգման որեւէ ձեւաչափ չի ենթադրում: Պարտադիր ատեստավորման արդյունքում որոշվում է ուսուցչի համապատասխանությունը զբաղեցրած պաշտոնին, աշխատավարձի բարձրացում, հավելավճարների տրամադրում չեն նախատեսվում:

Կամավոր ատեստավորման ժամանակ ուսուցիչները սեփական նախաձեռնությամբ անցնում են թեստավորում՝ մասնագիտական առարկայական գիտելիքներ ստուգելու նպատակով, եւ

ըստ իրենց գրանցած արդյունքի՝ ստանում **30-50** տոկոս հավելավճար:

ԿԳՄՍ նախարարի տեղակալի տեղեկացմամբ՝ ուսուցչի կամավոր ատեստավորման թեստերը կազմում է ԳՏա-հատման եւ թեստավորման կենտրոնը՝ համապատասխան առարկայի ծրագրային նյութերի շրջանակում:

Ժամանա Անդրեսայանի հավաստմամբ՝ թեստեր կազմելու գործընթացում ներգրավված են բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ հանրակրթական դպրոցներում աշխատող ուսուցչական համակարգի ներկայացուցիչներ:

«*Ուսուցչի կամավոր ատեստավորման թեստերը շտեմարանային չեն եւ զգալիորեն տարբերվում են շրջանավարտների եւ դիմորդների համար նախատեսված թեստերից*», - նշել է ժամանա Անդրեսայանը՝ հավելելով, որ փորձնական ծրագրի հիմնական նպատակը մի կողմից բարձր մասնագիտական պատրաստությամբ մասնակավարժների համար ավելի բարձր վարձատրության ապահովումն է, մյուս կողմից՝ իրավիճակի փոփոխումը:

Նախարարի տեղակալի կանխատեսմամբ՝ առաջին փուլում շատ ուսուցիչներ թերեւս կխուսափեն եւ մասնագիտական գիտելիքների ստուգման քայլին զնալու համարձակություն չեն ցուցաբերի: Սակայն, հետագայում, երբ ցուցանված թեստերից, - նշել է ժամանա Անդրեսայանը՝ իրականացնում է որեւէ ուսուցչի փորձ ձեւավորվի, ժամանա Անդրեսայանը չի բացառում, որ շատերը կգնան թեստավորման:

Կամավոր ատեստավորման ծրագրի փորձարկման արդյունքների վերլուծությունից հետո, ըստ Ժ. Անդրեսայանի, հնարավոր է, որ մասնագիտական գիտելիքների թեստավորման եղանակը որպէս ատեստավորման ձեւ, դառնա պարտադիր եւ կիրառվի ողջ համակարգի համար՝ միասնական ձեւաչափով, որպէս հիմք ուսուցչի մասնագիտական ստանդարտի որոշման համար:

Ուսուցչի մասնագիտական կատարելագործման նոր համակարգ

Նախատեսվում է վերանայել նաեւ տարակարգերի շնորհման գործընթացը՝

ցը՝ ներդրելով ուսուցչի մասնագիտական ստանդարտների հասկացությունը, որի իրականացման նպատակով փոփոխություն է նախաձեռնվելու «*Հանրակրթության մասին*» ՀՀ օրենքում:

Ժամանա Անդրեսայանի խոսքով՝ ներկայումս գործող ուսուցչի որակավորման տարակարգի համակարգը խնդրահարույց է: «*Տարակարգ շնորհելով պետությունը ծանաչում է ուսուցչի մասնագիտական ձեռքբերումները, սակայն երբ այդ նույն ուսուցիչը փոխում է աշխատավայրը՝ տեղափոխվելով այլ դպրոց, ունենում է տարակարգի պահպանման խնդիր: Երկրորդ խնդիրը՝ եթե անգամ ուսուցիչը բավարարում է պահանջվող բոլոր բնութագրիչներին, նա չի կարող դիմել միանգամից 4-րդ աստիճանի տարակարգ ստանալու համար, որովհետեւ դրա համար նախ պետք է ստանալ 1-3-րդ աստիճանի տարակարգերը՝ հերթականությամբ եւ որոշակի ժամանակահատվածում: Առաջինից մինչեւ չորրորդ աստիճանի տարակարգի հասնելու համար ուսուցիչը կպահանջվի նվազագույնը 9 տարի ժամանակ: Ի սկզբանե, տարակարգի շնորհման համակարգի ներդրումը եղել է դրական գաղափար, սակայն դրա իրականացման ընթացքում բավարար չափով չի խթանում ուսուցչի մասնագիտական զարգացումը*», - նշում է փոխնախարարը:

Ելնելով նախկինում կուտակած փորձից, համադրելով միջազգային լավագույն փորձը՝ տարակարգի տրամաբանությունը նախատեսվում է փոխարինել մասնագիտական ստանդարտի գաղափարով: Ըստ այդմ՝ ուսուցիչների մասնագիտական առաջխաղացման համար կարեւորվում է ուսուցչական կարիերայի գաղափարը՝ հնարավորություն տալով, որ յուրաքանչյուր մասնագիտական ստանդարտի համեմատ ուսուցիչը ստանա համապատասխան վարձատրություն: Նոր գործընթացի հիմքում կդրվի կրեդիտների կուտակման գաղափարը, որով էլ կորոշվի մասնագիտական որոշակի ստանդարտին համապատասխանությունը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Օլիմպիադա

Հաղթողները կատանան անվանական կրթաթոշակ

2021 թվականին 9 առարկաներից՝ «*Պատմություն*», «*Ինֆորմատիկա*», «*Անգլերեն*», «*Ֆրանսերեն*», «*Գերմաներեն*», «*Հայոց լեզու*», «*Հայ գրականություն*», «*Ռուսաց լեզու*» և «*Հայոց եկեղեցու պատմություն*», կազմակերպվել է 2020-2021 ուստարվ մրցույթայինների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը: Օլիմպիադային մասնակցել են **187** աշակերտներ, որոնցից **36-ն** արժանացել է առաջին, **61-ը**՝ երկրորդ, իսկ **90-ը**՝ երրորդ կարգի դիպլոմների:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատվել է օլիմպիադայի եզրափակիչ փուլերում հաղթած և անվանական կրթաթոշակ ստացողների ցանկը:

Կրթաթոշակները տրամադրվում են համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 3-ի 605-Ա/2 հրամանով հաստատված «*Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների սովորողներին անվանական կրթաթոշակի տրամադրման*» կարգի: Ըստ այդմ՝ եթե

սովորողը միաժամանակ երկու կամ երեք հիմքով է ընդգրկվում կրթաթոշակ ստացողների ցանկում, ապա նա կարող է ստանալ դրանց հանրագումարի չափով կրթաթոշակ: Անվանական կրթաթոշակը սովորողներին տրվում է հաստատությունների միջոցով՝ մեկ տարվա հաշվարկով, իսկ ուսումնառությունը տվյալ հաստատությունում դադարելու դեպքում մեկ տարվա համար նախատեսված կրթաթոշակի չվճարված մասը սովորողին վճարվում է միանվագ: Սովորողներին խրախուսելու նպատակով սահմանված անվանական կրթաթոշակի նոր կարգը գործում է 2020 թ. հունվարի 1-ից:

Առարկայական օլիմպիադայի հաղթողների համար սահմանված են հետևյալ կրթաթոշակները.

1. միջազգային առարկայական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝
 - առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **25.000 դրամ**,
 - երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **20.000 դրամ**,

- երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **15.000 դրամ**,
- եզրափակիչ փուլերի այլ մասնակիցներին՝ ամսական **10.000 դրամ**,
- 2. միջազգային դպրոցական այլ օլիմպիադաների (ժառանգական միջազգային օլիմպիադա, Մեդիտերանյան միջազգային օլիմպիադա և այլն) եզրափակիչ փուլերի մասնակիցներ՝
 - առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **15.000 դրամ**,
 - երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **10.000 դրամ**,
 - երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **7.500 դրամ**,
 - 3. ՀՀ առարկայական հանրապետական օլիմպիադաների եզրափակիչ փուլերի հաղթողներ (դիպլոմակիրներ)՝
 - առաջին կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **10.000 դրամ**,
 - երկրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **7.500 դրամ**,
 - երրորդ կարգի դիպլոմակիրներին՝ ամսական **5.000 դրամ**:

Գեղինե ՀՈՒՅԱՆՍՅԱՆ

Եղեռն...

Գարուն ա, ձուն ա արել...
 1915-ի սկզբին, մի շարք գաղտնի խորհրդակցություններից հետո, թուրքական կառավարությունը (Թալեթի, Էնվերի, Ջեմալի գլխավորությամբ) որոշեց, անկախ սկսված համաշխարհային պատերազմի ելքից, բնաջնջել արևմտահայությանը: Մշակվեց գործողությունների հստակ ծրագիր. որ քաղաքում, որ գյուղում, երբ եւ ինչպես, ինչ միջոցներով: Նախեսառաջ 18-45 տարեկան հայ տղամարդկանց գորահավաքներ անցկացվեցին, ապա նորակոչվեցին եւ բանակում մինչ այդ ծառայող հայ զինվորականներին մաս-մաս ոչնչացրեցին: Հաջորդը մտավորականությունն էր: Ապրիլի 11-ի գիշերը (իհն տոմարով) Պոլսում առանձին-առանձին դավադրաբար ծերբակալվեցին 800 հայ մտավորականներ: Նրանց բոլորին գազամաքար սպանեցին: Նրանց մեջ էին... Զարմանալի՜ զուգահեռություն. թերեւս երբեք այդքան պայծառ դեմքեր մի-մասնանակ չէին ապրել ու ստեղծագործել, ինչպես այդ եղբերական տարիներին:

Հայ զինվորականների գնդակահարություններին, մտավորակա-

նության նահատակությանը, մի խումբ ազգային գործիչների մահապատժին (կախաղանի միջոցով) հաջորդեցին զանգվածային տեղահանությունները եւ կոտորածները... Ինչպես՞ հաշվել՝ որքա՞ն մահացան, որքա՞ն կին, որքա՞ն ծերեր, որքա՞ն մտքի եւ կամ որքա՞ն հոգի մշակներ... Ու այդպես մինչեւ տարեվերջ՝ 1.500.000... Ու յուրաքանչյուրին՝ ամենաբարտախնայունը ու մարդկային լեզվով անպատմելի եղանակներով... Ցեղասպանությունը կատարվում էր եւ Արեւմտյան Հայաստանում, եւ Օսմանյան Թուրքիայի այլ տարածքներում: Հիրավի, ինչպես հիշարտացել էր Թալեթը, երեք ամսում ավելին արվեց, քան արյունարբու սուլթան Համիդը արել էր 30 տարում...
 Ողջ Արեւմտահայությունը կամ կոտորվեց, կամ արտոլվեց ու զոհվեց ճանապարհներին, մի մասն էլ արտաքսվեց ի սփյուռս աշխարհի, ուր կարողացավ գոյատևել առայսօր՝ սպասելով հատուցման օրվան:


... Սրանք հանրագիտարանային տվյալներ են, որ ծանոթ են յուրաքանչյուր հայի: Ու ամեն անգամ

յուրաքանչյուր հայաստանցի, բարձրանալով Ծիծեռնակաբերդ, գլուխ է խոնարհում Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին ու ամեն անգամ ցավով հայտնագործում, որ անդամնալի են մեր կորուստները... Կորցրած հողը կարելի է հետ նվաճել: Հայրենիքը երբեք չի կորչում: Վաղ թե ուշ այն կրկին իր տիրոջն է պատկանելու: Նոր մահուկներ են ծնվելու հայոց աշխարհում, բայց գոհված ու չկայացած մահուկ հանճարների կորուստը անդամնալի է: Նոր Կոմիտասներ են ստեղծագործելու հայոց աշխարհում, բայց այն, ինչ պիտի աներ միայն **Կոմիտասը**, այլևս ոչ ոք չի անելու... Ու նաեւ **Ջոհրապետը**, **Վարուժանը**, **Սիմանթոնը**... ու բոլոր 1,5 միլիոնը՝ հատ-հատ: Նրանք են մեր կորուստը... ու նրանց գավակները, նրանց գավակների գավակները, որ մեզ այսօր այնքան պետք են ու չկան, ու չեն լինելու երբեք...

«Արեւելքում մեռնում է մեր քույրը... մեռնում է միայն այն բանի համար, որ մեր քույրն է: Նրա հանցանքն այն է, որ նա բաժանել է մեր զգացմունքները, սիրել է այն, ինչ սիրել ենք մենք, մտածել է այնպես,

ինչպես մենք եւ մեզ նման ընկալել է իմաստություն, բանաստեղծություն ու արվեստ: Դրա մեջ է նրա հանցանքը...», - գրել է մեր ժողովրդի բարեկամ **Անատոլ Ֆրանսը**: Բայց գուցե մեր հանցանքը դա՞ չէր միայն, այլ այն, որ մենք առաջինն էինք ստեղծել քրիստոնեական քաղաքակրթություն ու սնել նույն եվրոպային: Եվ եթե նույնիսկ նա լինեի ոչ թե պաշտպանի, այլ անաչառ դատավորի՝ դեռում... Բայց մեր հանճարի, մեր կենսունակության, տնտեսական բարգավաճման առանձնահատուկ շնորհքի պատճառով մենք վտանգավոր էինք, ու մեր անկախությունը մոտակա մրցակցության ակնկալիք է ծնում պատմության ասպարեզի վրա ճեմող պետությունների դիվանագիտական ուղեղներում, եւ նրանց ձեռնտու չէ մեզ ունենալ իրենց հավասար իրավունքներով... Գոյության կոչվ է...

Մի բանում անվերապահորեն ճիշտ է Անատոլ Ֆրանսը. «Հայաստանը մեռնում է, բայց նա կվերածնվի... նրան մնացել է շատ քիչ բան, թանկագին արյուն, որից կծնվի մի հերոսական սերունդ»:



Հերոսամարտեր...

Չա՛րկ, լաո, զարկողին՝ գա՛րկ...
 1915 թվականին Արեւմտյան Հայաստանի մի շարք գավառներում եւ քաղաքներում հերոսական ինքնապաշտպանության դիմեց ժողովուրդը եւ արարեց խիզախության գարնանահորաշ դրվագներ: Եվ եթե թուրքական կառավարությունը դիվանագիտական աջակցություն չունենար, եւ հայ զանգվածներն էլ ապավինած լինեին միայն սեփական ուժերին եւ նախօրոք լինեին պատրաստ, 1915-ը հնարավոր է երջանիկ տարեթիվ դառնար...

Վանի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան, Տարոնի, Ուրֆայի... հայ քաջորդիները տասնապատիկ ավելի թանկ վաճառեցին ռազմիկ իրենց կյանքը՝ դառնալով Թուրքիային հավերժական սարսափ, իրենց սերունդներին՝ անշեշ օրինակ:

նեկ ամիս (1915, ապրիլ) եւ պակվեց հաղթանակով: 1915-ի մայիսի 1-ին Արամ Մանուկյանը հռչակվեց ինքնավար Վանի նահանգապետ:

թուրքական հրոսակների (թվով՝ 5-6 հազար) գործնեղը: Այդ առասպելական դիմադրությունը թուրքերը հաղթահարում են միայն խորամանկ դավադրությամբ...

Տարոն
 Տարոնի նահանգի (Բաղեշ, Մուշ, Սղեթ, Կենճ, Սասուն, Մանազկերտ) ինքնապաշտպանության կազմակերպիչներն էին **Ռուբենը**, **Կորյունը**, **Կոմսը**՝ իրենց խիզախ ընկերներով: Առավել տեսական էր դիմադրությունը Մուշում եւ Սասունում՝ 1915-ի մայիսից մինչեւ 1916-ի փետրվար: Թշնամին պարտվում էր, բայց նորանոր կանոնավոր ուժեր էին ներգրավվում... Այնուամենայնիվ, հերոսական ինքնապաշտպանության շնորհիվ բնակչության զգալի մասը, ապաստանելով լեռներում, փրկվում է կոտորածից:

Շապին-Գարահիսար
 Այս գյուղաքաղաքում ազգային խմորումները սկսել էին 1880-ական թվականներից: Այստեղ են ստացել իրենց առաջին ֆիդայական մկրտությունը **Անդրանիկը** եւ **Մուրադը**:
 ... 1915-ի հունիսի 2-ից 20-ը քաղաքի փոքրաթիվ ինքնապաշտպանական ջոկատը (150 մարդ) անօրինակ խիզախությամբ հետ է մղում

Մուսա լեռ
 Մուսա լեռը գտնվում է Միջերկրականի արեւելյան ափին: Նրա բարձունքների վրա վեց հայկական գյուղեր կային: Այդ վեց գյուղերի 4231 բնակիչներ (1171 կին, 1237 այր, 1883 անչափահաս) նախընտրեցին անապատներում մեռնելու փոխարեն խուսափել տարագրությունից, մնալ իրենց լեռան վրա եւ կռվել թշնամու դեմ: 1915-ի օգոստոսից մինչեւ սեպտեմբեր (40 օր) ծգվում է հերոսական պաշտպանությունը եւ ավարտվում ֆրանսիական մակերի օգնությամբ մուսալեռցիների անվտանգ գաղթով: Մամրամասները շարադրված են Ֆրանս Վերֆելի հայտնի գրքում: Ասենք միայն, որ ինքնապաշտպանական ջոկատի հրամանատարն էր 21-ամյա **Մովսես Տեր-Գալստյանը**:

Ուրֆա
 Միջագետքի հյուսիսում էր գտնվում Ուրֆան (Ուռհա, Եղեսիա), որ ուներ շուրջ 30.000 հայ բնակչություն... Ուրֆայի հերոսամարտի կազմակերպիչներն էին **Սկրտիչ Յոթնեղբայրյանը** եւ **Հարություն Ռասթելեյանը**...

Արդարահատույց...

Եղեգյա գրչով վրեժ երգեցի...
 Հայ ազգային-ազատագրական պայքարը ծնեց ֆիդայիների՝ ազգային հերոսների մի լուսավառ համաստեղություն: Ֆիդայական շարժման մասին պատմական ճշմարտությունը քիչ թե շատ ծանոթ է ընթերցողին: Սակայն կա ազգային հերոսների մի այլ աստղաբաշխ, որոնց մասին շատ կցկրտոր տեղեկություններ կան հրատարակված մեզանում. հայ վրիժառուները, որ շարունակեցին մեծ հայդուկների գործը՝ նոր պայմաններում ու նոր ձեւերով: **Արաբոյի**, **Աղբյուր Սերոբի**, **Քեռու**, **Անդրանիկի**, **Մուրադի**, **Գեւորգ Չաուշի**, **Հրայրի**, **Սաքոյի**, **Մախլուտոյի** եւ այլոց անունների հետ հայ սերունդները երախտապարտ փառաբանելու են **Արամ Երկանյանին**, **Սողոմոն Թելեթյանին**, **Արշավիր Շիրակյանին**, **Ստեփան Ծաղիկյանին**, **Միսաք Թորլաքյանին**...

տանի 85 անդամների...
 1919-ին գնում է Պոլիս՝ Թալեթի հետքերով: Այնուհետեւ՝ Բեռլին: Հաստատվում է որպես ուսանող: Եշտուն է Թալեթի նոր անուն-ազգանունը, հասցեն... 1921թ. մարտի 15-ի առավոտյան, երբ Թալեթը դուրս է գալիս բնակարանից եւ սկսում առաջանալ փողոցով, Թեհլերյանը ընդառաջ է դուրս գալիս եւ դիմա-հար կրակում մարդասպանի գլխին... Այնուհետեւ Սողոմոնը ձերբակալվում է եւ երկարատե դատավարությունից հետո ազատ արձակվում: Մահացել է 1960թ., Ամերիկայում:

Ստեփան Ծաղիկյան
 Ծնվել է 1886-ին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաս-

խարհի ծանոթ բոլոր անկյուններում...»:

Արշավիր Շիրակյան
 Տակավին պատանի, Պոլսից մեկնում է Դոմն եւ հետապնդում Սայիդ Հալիմին, որի վարչապետության օրոք էր տրվել 1915-ի կոտորածների որոշումը: 1921թ. դեկտեմբերի 5-ին ցատկում է փողոցով սուրացող կառքի ելքի աստիճանի վրա եւ սպանում նախկին վարչապետին: Իտալական թերթերը կախարդական հերոսություն են նկատում կատարվածը: Այնուհետեւ Դոմնից անցնում է Բեռլին, Արամ Երկանյանի հետ հետամուտ լինում Բեհաեդդին Շաքիրին եւ Ջեմալ Ազմին: Միեւնույն օրը, երբ Երկանյանը ահաբեկում է Շաքիրին, նույն պահին էլ Շիրակյանը գնդակահարում է Ջեմալ Ազմին:

հային առաջին պատերազմի ընթացքում գտնվում էր Խարկովում: Այնտեղից անցնում է Կովկաս, միանում կամավորներին: Հայաստանի խորհրդայնացումից հետո մնում է տեղում իրականացնելու չիրագործված մահապատիժներ: 1922թ. հունիսի 21-ին Թիֆլիսում գնդակահարել է Ջեմալ փաշային: Չեկայի կողմից ձերբակալվել է եւ անհետ կորել:

Արամ Երկանյան
 Կարնեցի է, ծնված 1900թ.: Եղեռնից մազապարծ ապաստանել է Կովկասում: Մասնակցել է Բաշ-Ապարանի ճակատամարտին: Հայաստանի Հանրապետության օրերին եղել է ՀՀԿ կուսակցության տրամադրության ներքո: Թիֆլիսում ահաբեկել է (1919 եւ 1920 թթ.) Դասիմբեկովին եւ Սարաֆովին: 1922թ. Բեռլինում ահաբեկել է Բեհաեդդին Շաքիրին: Այնուհետեւ ապրել է Ռուսիայում, Արգենտինայում... Մահացել է 1934-ին:

Սողոմոն Թեղեթյան
 Ծնվել է 1886-ին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաս-

«Այնքան թեթեւ կ'ըզգայի, կարծես լեռ մը ինկած էր կուրծքիս վրային: Վստահ էի գնդակիս մահացության մասին: Հատուցված էր ուխտը հայ մեռելոցին»:

Սողոմոն Թեղեթյան
 Ծնվել է 1886-ին, Դարանաղյաց գավառում: 9 տարեկան հասակում ընտանիքով մեկնել է Երզնկա: Եղեռնի ընթացքում կորցրել է իր գերդաս-

Ստեփան Ծաղիկյան
 Ծնվել է 1886-ին, Խոտորցուրի Մոխրկուտ գյուղում: Համաշխար-

Միսաք Թորլաքյան
 Ծնվել է Տրապիզոնում: 1916-ին կամավոր: Ապա անցնում է Պոլիս, հետապնդում Բաքվի հայկական կոտորածի պատասխանատու Ջիվանջիրին, որին էլ դիմախար գնդակահարում է 1921թ. հուլիսի 8-ին:

Ստեփան Ծաղիկյան
 Ծնվել է 1886-ին, Խոտորցուրի Մոխրկուտ գյուղում: Համաշխար-



... 3 տարի անց

Ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք...

Կա ավանդական մի չափանիշ. պատկերացնելու համար հաղթանակի մեծությունը շեշտվում է հակառակորդի ուժը... Մեր հակառակորդը տարիներ, դարեր նա էր, որի մասին Յուզոյի թեալոր խոսքը հնչում է այսպես. *այստեղով թուրքը է անցել, մնացել են միայն ավերակներ*: Իսկ այդ հակառակորդը, թշնամին, թեև ոչ ուղղակիորեն, այնուամենայնիվ, օժանդակություն ստացավ եւ Ռուսաստանից, որին ապավինել էր մեր ազգի կեսը եւ որին հավատում էր մյուս կեսը եւս, եւ Եվրոպայից, որը Հայկական հարցին մայրում էր միայն որպես մշտական կռվան թուրքիայի վրա ճնշում գործադրելու...

Ուրեմն որքան հերոսական պետք է լիներ 600 տարի իր պետականությունը կորցրած ժողովուրդը, որ հաղթահարել էր բեմն խաչվող, երբեմն զուգահեռ ընթացող այդ երեք ուժերը: Եղեմն անգամ չկասեցրեց ոչ միայն նրա գոյատևումը, այլև կորցրածը հետ բերելու անսասան կամքը եւ տվյալ պահին խիստ անհրաժեշտ հավատը սեփական ուժերի նկատմամբ:

Հայոց մեծ եղեռնից երեք տարի անց տեղի ունեցավ Սարդարապատի ճակատամարտը... 1915-ին

անայացել էր Արեւմտյան Հայաստանը: Բայց դեռ կար Արեւելյանը... 1917-ի Ռուսաստանի հեղափոխությանը տասնամյակ էր ցարական իշխանությունը, եւ Արեւելյան Հայաստանը իրերի բերումով հայտնվել էր ինքնուրույն դրության մեջ: Վերջին 600 տարիների ընթացքում առաջին անգամ հայության մի հատվածը ազատվել էր կապանքներից եւ, թեև արյունաքամ, քայքայված տնտեսությամբ, բայց արդեն միայն իր սեփական, թեկուզեւ նվազագույն, ուժերը տնօրինելու հնարավորությամբ... Բնական էր ստեղծված իրարդրության մեջ թուրքական նոր արշավանքը: Արեւմտյանի ճակատագիրը կարող էր կրկնվել եւ Արեւելյան Հայաստանում... Բայց... Սարդարապատի հաղթանակը իր ունեցած նշանակությամբ իրավացիորեն համեմատվել է Ավարայրի հետ: Հայ ժողովրդի համար չափազանց վճռորոշ այդ հաղթանակը պարզապես պարզեցեց գոյատևումը... Հաղթանակից ընդամենը 2-3 օր անց հռչակվեց Հայաստանի Հանրապետությունը: Պատկերացնել է պետք հայոց ոգեւորությունը. Եղեմնից երեք տարի անց, եղեռնագար, լիովին քայքայված, կողոպտված եւ լքված, վերջին ուժերը Սարդարապատում փորձարկած Արեւելյան Հայաստանը իրագործում է իր 600-ամյա երազանքը. անկախ պետա-

կանությունը վերականգնվում է...

1918-ի մայիսի 28-ից սկսվում է Հայ դատի պահանջատիրության (Հայկական հարցի) նոր փուլը: Առաջինը իր բառասանայա տարբերությամբ ավարտվել էր եղեռնով... Երկրորդը տեւեց ընդամենը երկուսուկես տարի եւ ավարտվեց Հայաստանի խորհրդայնացումով...


1918-ի մայիսի վերջին Հայկական Հանրապետության տարածքը կազմում էր ընդամենը 10.000 ք. կիլոմետր: Երկու տարի անց 1920-ի կեսերին՝ 70.000 ք. կիլոմետր: Յոթնապատիկ այս հաջողությունը ամենից մեծ կռվանն է հօգուտ որեւէ ազգի անկախության: Ընդամենը երկու տարի հայ ժողովուրդը ապավինել էր միայն սեփական ուժերին եւ կարճ ժամանակամիջոցում հաղթահարել ռազմական, տնտեսական, քաղաքական բազում դժվարություններ ու առաջադիմել նաեւ դիվանագիտության մարզում: 1920թ. օգոստոսի 10-ին կնքված Սեւրի դաշնագրով Հայաստանին հատկացվում էր եւս 100.000 ք. կիլոմետր տարածք. գրեթե ամբողջությամբ լուծվում էր Հայկական հարցը... Սակայն, Ավետիս Ահարոնյանի հստակ բնորոշմամբ, ազատությունը բախում էր մեր դուռը, իսկ մենք պատրաստ չէինք նրան ընդունել... Նորից կողմնորոշումներ, տարածայնություններ, չհաղթահարված ստրկախո-

ղություններ...

Հայաստանի Հանրապետության թիկունքում սկսվում է ռուս-թուրքական քաղաքական մի նոր խաղ. ցարական Ռուսաստանի Հայաստանի հանդեպ ունեցած նկրտումներն այս անգամ դրսեւորվում են արդեն բոլշևիկյան Ռուսաստանի համաշխարհային հեղափոխության շահերով... Կնքվում են ռուս-թուրքական պայմանագրեր, Ռուսաստանը նորից իր ձեռքն է վերցնում Հայաստանի եւ Հայկական հարցի տնօրինումը... Օտար երկրորդ մեծիմ ապավինելու հին հիվանդությունը խարխուլում է հայոց միասնությունը:

Անդրանիկի հաշվարկներով Հայաստանը 65.000 զորաբանակով կարող էր իրականություն դարձնել Սեւրի դաշնագրով արտոնված Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստանը, սակայն գաղափարական տարածայնությունները քայքայում են նույնիսկ առկա ուժերը, եւ Հյուսիսի ու Հարավի ճնշման միջեւ Հայկական Հանրապետությունը ստիպվում է ոչ միայն իրաժարվել նոր տարածքներից, այլև ընդհանրապես անկախ պետականությունից...

Հայ դատի պահանջատիրության երրորդ փուլը (1920-1965) որեւէ նշանակություն պարունակում է միայն Սփյուռքի գործողություններում: Մայր հայրենիքում սկսվում է մի երկարատև լուծություն...



Թող որոտա իմ գլխին...

1965 թվականով սկսվեց հայ դատի պահանջատիրության նոր հանգրվանը: Մինչ այդ եղել էր 1937-ը, հետո՝ 1949-ը, հետո եկել էր 1953-ը: Մի ամբողջ 45 տարի «Եղեռն» կամ «Հայկական հարց» արտահայտությունները ուղղակի հանված էին մեր բառապաշարից, ինչպես ժամանակին օսմանյան թուրքիայում արգելված էր «Հայաստան» բառի գործածությունը: Միայն 1965-ին ժողովուրդը, մի խումբ ընտրյալների շքանշանով, նշեց Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյա տարելիցը: Եղան հանրահավաքներ, բազմամարդ ցույցեր, երթեր, կիզակետում էին իրապարակները, Կոմիտասի անվան զբոսայգին... Սա առաջին համաժողովր-

դական պոթեթիկումն էր խորհրդային Հայաստանում: Նույնիսկ «Պրավդան» այդ օրերին հոդված տպագրեց եղեռնի մասին: Հետագա իրադարձությունները ցույց տվեցին մայր հայրենիքում եղեռնի 50-ամյա տարելիցի նշման ողջ նշանակությունը: 1965-ից հետո մեզանում սկսեցին լույս տեսնել բազմաթիվ գրքեր՝ հայոց ցեղասպանության մասին: Իհարկե, դեռևս չէր վերհանվում ողջ ճշմարտությունը, սակայն մեր պատմության այդ մի դրվագը եւս մտավ մեր մշակութային շրջանառության մեջ, մեր հիշողության մեջ, ու արդեն գիտեինք, որ ունենք Հայ դատ ու պահանջատիրություն:

1965-ը անհամեմատ մեծ ընդգրկումով նշվեց Սփյուռքում: Ոգեկոչման արարողություններ կատար-

... 50 - ամյակ

վեցին Լիբանանում, Միացյալ Նահանգներում, Ֆրանսիայում, Արգենտինայում, Կանադայում, Իտալիայում եւ այլուր: Արտասահմանյան բազմաթիվ երկրներում, հատկապես՝ թուրքական դեսպանատների առջեւ, տեղի ունեցան ցույցեր, քայլարշավներ... Բեյրութում հրատարակվեց «Հուշամատյան Հայոց Մեծ Եղեռնի» մեծածավալ աշխատությունը... Ամենատարբեր երկրներում եւս լույս տեսան բազմաթիվ գրքեր, հոդվածներ: «Սոնդ» թերթում հրատարակված իր հոդվածում հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդին գրեց. «Բոլոր մարգերում մեջ, հակառակ իրենց փոքր թվին, հայերը կնպաստեն քաղաքակրթության համաշխարհային գործին»: «Յունանիտեն» նշեց, որ «Հայե-

րի մասսայական կոտորածը ցեղասպանության առաջին ոճիրն էր 20-րդ դարի սկզբին, 1914-18 թթ. պատերազմի ընթացքում: Եվ այդ ոճիրը երբեք չդադարեց ու չդադարապարտվեց»:

Ժամ Սարի Գառզուն իր «Մի իսկական ցեղասպանություն» գրքում հանգամանորեն ներկայացրեց Հայոց Մեծ Եղեռնը, վերլուծելով նրա հետևանքները:

Իվ Տեռնը Հայաստան այցելելուց հետո հրատարակեց «Հայեր. մի ցեղասպանության պատմություն» աշխատությունը...

Հարկ չկա բոլորը թվարկել: Հայությունը չէր մոռացել իր պատմությունը, իր դատը, աշխատում էր օրնիքում, փնտրում ու գտնում կատարվածի արդար հատուցման համակիրներ:

Ձեզ ո՞վ էր առում՝ մեզ սեղմե՞լք այդքան...

Ի՞նչ կար Հայաստանում 1965-88 թվականներին: Երկրում «ժողովում» էր «լծացումը»: Հայաստանում այն ուներ մի ուրիշ երանգ եւս. ծովանում-ամբարվում էր ժողովրդի հիշողությունը, որ այլևս արքնացել էր ստալինյան «անհատի պաշտամունքի» պսակազերծումից ու մանավանդ 1965-67թթ. ժողովրդական ընդվզումներից հետո... Եիշտ է, դա արտահայտվում էր ոչ զանգվածայնորեն, հատկապես՝ գրական-մշակութային եւ պատմագիտական ոլորտներում, բայց, այնուամենայնիվ, գոյատևող ժողովուրդը այլևս թեակոխել էր իր արդար պահանջատիրության նոր փուլը եւ ապրում էր մի յուրատեսակ նախապատրաստական շրջան: Այդ տարիներին ստեղծագործական վերելքներ ապրեց **Հովհաննես Շիրազը**, ի հայտ եկան մշակութային այնպիսի հզոր երեւույթներ, ինչպիսիք էին **Պարոյր Սեւակը**, **Մինաս Ավետիսյանը**, **Սուշեղ Գալշոյանը**... Ավելացնենք **Հրանտ Մաթևոսյանի** արձակը, **Տիգրան Մանսուրյանի** երաժշտությունը, **Համո Սահյանի** պոեզիան, **Սերո Խանգալ-**

յանի պատմավիպասանությունը... Բոլորը չեն թվարկվում... Ստեղծվում էին արժեքներ, որոնցով կրթվում էր նոր սերունդը, մանավանդ որ պատմագիտության բնագավառում եւս դրական տեղաշարժերն ակնհայտ էին (Ջոն Կիրակոսյան եւ ուրիշներ): Եվ մտալուտ գարնան շունչը զգացվում էր օրավուր: 1967թ. նոյեմբերի 28-ին տեղի ունեցավ Ծիծեռնակաբերդի բարձունքի վրա կառուցված՝ 1915թ. Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Հուշարձան-կոթողի բացումը: Մի քանի ամիս անց, այս անգամ՝ պատշաճ օրը, 1968-ի մայիսի 25-ին, հանդիսավորապես բացվեց Սարդարապատի ճակատամարտին նվիրված հուշահամալիրը: Այդպիսով նշվեց մեր պատմության փառահեղ այդ իրադարձության 50-ամյակը եւ «Եղեռն» բառ-հասկացության հետ շրջանառության մեջ դրվեց «Սարդարապատ» հասկացությունը: Իհարկե, պատմական ճշմարտությունները դեռևս կարելի էր քաղել միայն Սփյուռքում լույս տեսնող գրքերից ու պարբերականներից, իսկ մայր հայրենիքում լրկ դրանց, ասենք, Հանրային գրադարանում պահպանվող եզակի օրինակներից: Նույն՝ 1968-ի հոկտեմբերի 18-ին

հանդիսավորապես նշվեց Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Ոգեւորությունը համազգային էր: Ու թեև մի **Պի-նոտրովսկի** (անշուշտ, մեր գիտնականների օժանդակությամբ) կարողացավ աշխարհին զարմացնել, թե տեսե՞ք, մի նոր, անհայտ աշխարհ եմ հայտնաբերել, մի Ուրարտու, մի առանձին քաղաքակրթություն, հայ ժողովուրդը մեծ խմբերով բարձրանում էր Արին-Քերդ բլուրը, դեպի Երեբունի ամրոցը, եւ բնավ չէր կասկածում, որ Երեբունին Երևանն է եւ նույնքան հայկական, որքան Վանը, Տիգրանակերտը, Վաղարշապատը... Իսկ բլրան ստորոտին շրջիկ-վաճառողները ազգային կիրառական արվեստի նմուշներ ու նաեւ Անդրանիկի լուսանկարներն էին վաճառում... Դե գնա ու սաս, թե Ուրարտուն Արարտուն է, Հայաստանը չէ, թե հայոց լեզուն 6 հազար տարեկան է, բայց հայ ժողովուրդը... ընդամենը 2,5 հազար, որովհետեւ 3,5 հազար տարի կազմավորման ընթացքի մեջ է եղել... Ժողովուրդներ են եկել ու գնացել պատմության թատերաբեմից, իսկ հայերը ժողովուրդ չեն եղել, ազգ չեն եղել, այլ ինչ-որ անհայտ ու տարանուն ցեղերի մի խառնարան-ամբոխ... Այդպիսի անհեթեթությունների միայն «գիտնականները» կարող են

հավատալ: Ժողովուրդը հո գիտի, մեկին գունդանոս մեկի պես պարզ է կար հայոց լեզուն, ուրեմն կար եւ այդ լեզվով խոսող, այսինքն հայ ժողովուրդը...

Եվ հետո՝ հո լծացումը անսահման չէ՞ր տեսելու: Անցնելու էր եւս քսան տարի, եւ Անդրանիկին հավասար Նժդեհն էր պաշտվելու, եւ սուտ «ուրարտացի» բառին փոխարինելու էր ճշմարիտ «արիացին»...

1978թ. ապրիլի 14-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը հաստատեց Հայկական ԽՍՀ սահմանադրությունը: Լծացում էր, բայց ժողովուրդն արդեն ընդվզել գիտեր ու իր կամքով ստիպեց սահմանադրության մեջ կրկին վավերացնել, որ Հայկական ԽՍՀ պետական լեզուն հայ ժողովրդի մայրենի լեզուն է, հայերենը...

Նույն թվականի աշնանը պետականորեն նշվեց Ռուսաստանի հետ Արեւելյան Հայաստանի միավորման 150-ամյակը, Հայաստանը 3-րդ անգամ պարզեւտրվեց Լեւինի շքանշանով: Բայց թե ժողովուրդն արդեն հոգնել էր կեղծ պատմություններից, անհիմն եւ անարդար «ինտերնացիոնալիզմներից», բայց ինքնիշխանի ուժով «լծացումը» դեռ շարունակում էր գոյատևել, եւ նրան բնորոշ կարգախոսն էր՝ «Շիրակո շազայետ Ազեր-

բայքան», որ համահունչ էր երկրի հիմնին՝ «Շիրակյա ստրանա մայա...»...

1967թ.-ից սկսած, արդեն թույլատրված կարգով, ամեն տարի ապրիլի 24-ին ժողովուրդը գնում էր Ծիծեռնակաբերդ: Պատմաորդ անմահ «Հայոց պատմություն» Կարեն Կարենի ծննդյան 1500-ամյա հոբելյաններն էր նշում, համոզվում ու հավատում, որ աշխարհն անճանաչելի է, որովհետեւ անվերջ է, բայց նաեւ՝ թեև փոքրաքանակ ժողովուրդ ենք, մեր պատմության մեջ շատ են հերոսական դեպքերն ու դեմքերը, որ ապրելու կենս էլ պատվով մեծելն է... Սփյուռքը շարունակում էր իր պայքարը ազգապահպանման համար՝ ուժացման դեմ, հայ դատի պահանջատիրության նորանոր եղանակներ փնտրում, մենք զսպանակի պես սեղմվում էինք ու հոգեւոր պաշար կուտակում, որ մեր թիկունքի հսկա պատմությանն ու մշակույթին ապավինած՝ սովորենք արժանապատիվ ապրել, արժանապատիվ պահանջել, արժանապատիվ պայքարել... Դեռ զայլու էր Փետրվարը, որ լիներ Չարթրոնք, որ պատմաբանությունը լիներ վատահ ու հաստատական, սեփական ուժի ու բարոյականության ինքնագիտակցմամբ:

Փետրվար...

Գարուն ա, արեւ ա արեւ...

Արցախահայությունը, իբրև անբակտերի մասը հայության, նույնպես անցավ 19-րդ դարավերջի ու 20-րդ դարասկզբի թուրքիզման (հատկապես՝ 1918-21թթ.): Հայոց ազգային-ազատագրական պայքարի՝ Արցախի բաժինը կասեցվեց 1921թ. հուլիսի 5-ի Կոմիտրոյի տիրահոշակ որոշումով: Սակայն մի՞թե հնարավոր է ժողովրդի կամքը ոտնահարել եւ զսպաշարակի մեջ պահել մշտապես... 1923թ. ստեղծված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Արցախի հայոց պատմական Արցախ աշխարհի մի հատվածում (անկուշտ հարեւանը միշտ աչք է տնկում ունեցվածքի, ու երբ դատավորը կաշառառու է, պատառ-պատառ կողոպտում է հողը) պահպանեց իր գոյությունը, շարունակական ցեղասպանությունների պայմաններում (վկա՝ Նախիջեւանը) անաղարտ պահեց իր հայեցի նկարագիրը ու մի կերպ դիմանալով «տիրոջ», մեղմ ասած, խորթություններին, սպասեց իր «աստեղային ժամին», որ գալու էր անպայման... 1988 թվականի փետրվարի 20: Երեւանի Թատերական իրապարակում հարյուր հազար հայաստանցի հայեր՝ առաջին անգամ մայրաքաղաքում հանրահա-

վաքի եկած, սպասում են Արցախից լուրերի. Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի արդյունքներին... «Աղբբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Աղբբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ կազմի մեջ անցնելու վերաբերյալ Աղբբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջեւ միջնորդելու մասին, ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին...», ու թնդում է Թատերական իրապարակը հազարաձայն «միացում»-ից, ու երկինք բարձրացած բռունցքներից, թվում է, դողում է մեր մոտ անցյալի ճակատագիրը...

Ու հաջորդ օրը, ու մյուս օրը, ութ օր շարունակ, թվում է, ողջ հայությունն է Թատերական իրապարակում, որ դրանից հետո Ազատության վերանվանվեց: Հայաստանը, թվում է, տեսանելի լարերով մեկ ակնթարթում կապվել է ողջ սփյուռքահայության, ողջ աշխարհի հետ... 100.000, 500.000, 700.000 ու ավելի մարդիկ, հայեր, միական, միաբռունցք իրենց պահանջատիրություն են ավելտում Մոսկվա, Նյու Յորք, համայն մարդ-

կությանը: Ու արձագանքներ ու շարժումներ, թվում է՝ ողջ Եվրոպան մեր միտինգներից է ցնցվում. ոչ մի օրինազանցության դեպք, մի ծաղիկ անգամ չի տորովել, բժիշկները օգնության են հասնում վայրկենապես, անվճար ուտելիք եւ ըմպելիք են բաժանում... Ու այսպես մի շաբաթում դառնում ենք Միասնական ազգ, Ազատ ժողովուրդ... Այն ո՞վ էր ասում, թե միաբան չենք: Այդ ի՞նչ էր, ուրեմն, հրա՞ջք, մի շաբաթվա մեջ ինչպե՞ս միացանք: Միասին էինք միշտ, ժամը պիտի գար, որ ելնեինք ոտքի...

... Ու միանգամից, մի քանի օր, մեկերկու ամիս, փոխվում է քաղաքը, փոխվում է Հայաստանը, ու Սարոյանը էլ չի ասում, թե՛ հայերը Հայաստանում ապրում են այնպես, ինչպես Ամերիկայում, այսինքն՝ իրենց ապրելով այդ երկիրը Հայաստան չեն դարձնում...

Հիմա Սարոյանը հարցնում է. «Աս բոլորը հայե՞ր են», ու երբ դրական պատասխան է լսում, հրճվում է մանկան պես, իր կիսված սրտի սնան մի օր իր հայրենիքն էլ է միացյալ դառնալու, ու բացականչում է. «Ապա մի փորձեք կործանել այս ցեղը, ասացե՛ք՝ դարձյալ 1915 է, ու աշխարհի աչքը պատերազմի ծխով բռնված: Կործանեցե՛ք Հայաստանը, տեսե՛ք՝



Կկարողանա՞ք: Իրենց շեն տներից քչեք նրանց անապատ: Չմոռանաք խել ձեռքների հացն ու ջրի վերջին ունայը: Իրենց ու իրենց Աստուծոները վառեցե՛ք: Տեսե՛ք, թե նրանք դարձյա՞լ չպիտի ապրեն: Տեսե՛ք՝ ցեղը դարձյա՞լ չպիտի հառնի, երբ նրանցից երկուսը իրար գտնեն մի գարեջրատան մեջ, թեկուզ տասը, թեկուզ հարյուր տարի հետո, եւ խնդան ու խոսեն իրենց մայրենի լեզվով: Ջանացե՛ք, տեսե՛ք՝ կարողանա՞ք պիտի, շանոր-

դիներ, արգելել նրանց, որ չծաղրեն ձեր մեծ-մեծ ճոճուհ գաղափարները, որ աշխարհում երկու հայ չխոսեն իրար հետ, փորձեք ջնջել նրանց... Փետրվարը, լինելով արթնացած հայոց ոգու վառ արտահայտությունը, ինչ-որ մի տեղ դեռ արտաքին հուզական փայլ էր լույ, ձեւ, որ անպայմանորեն պայմանավորեց եւ բովանդակությունը, առջեւում Գործն էր, որ արդեն ունեցավ իր առաջին շոշափելի արդյունքները:

Ազատագրում...

Պիտի կերտեք նոր արշալույս

Ղարաբաղյան շարժմանն ի պատասխան՝ աղբբեջանցիները կազմակերպեցին հերթական ցեղասպանություն Սումգայիթում: Նույն ծանոթ ձեռագիրը. թուրք խուժանը հագուրդ է տալիս իր արնախումբնազդին՝ իր իշխանության սցենարով... Աղբբեջանի հայաշատ բնակավայրերից կրկին ելան գաղթականների քարավաններ: Թալանված, հալածված, մազապուրծ բազմաթիվ հայեր (հարյուր հազարավորներ՝ միայն Բաքվից) մի կերպ հասան Հայաստան՝ ճանապարհին թողնելով ոչ միայն տանանյակների աշխատանքով ձեռք բերված ունեցվածք, այլև հարազատների մարմինները... Մի՞թե կրկնվելու էր պատմությունը...

Մինչ Հայաստանում քաղաքական նորագույն խնդրումները ձեւավորում էին ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, 1988-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժը հերթական անդամանելի աղետը բերեց հայ ժողովրդի գլխին... Բայց, օ՛ճա կատաղիր. 1915-ից երեք տարի անց՝ 1918-ին հիմնադրվել էր Առաջին Հանրապետությունը, եւ նախ, 1988-ի աղետից դարձյալ երեք տարի անց, 1991-ի սեպտեմբերի 21-ի հանրաքվեով հիմնադրվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Մինչ երկիրը պատրաստվում էր պետական շինարարության, ազերի վայրենի սանձազերծեց պատերազմ արցախահայության դեմ՝ նախահարձակ լինելով նաեւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում: Սակայն, ի հեռուկա թշնամու, 1992-94թթ. տեղի ունեցած մարտական

գործողությունների հետեւանքով ազատագրվեց Արցախի մարզը՝ հարակից շրջաններով... Սարդարապատից 74 տարի անց ճակատագիրը մեզ արտոնեց հպարտանալ մի նոր՝ Շուշիի հաղթանակով:

Հաղթանակը ձեռք բերվեց հայ ազատամարտիկների արյան գնով: Կնքվեց զինադադար... Սակայն պատերազմը դեռ ավարտված չէր: Արցախի հիմնախնդիրը, որ համայն հայության կենսականն էր ու Հայկական հարցի մերօրյա առաջնային բովանդակությունը, լուծված էր իրականում, բայց ազատագրումը դեռ վավերացված չէր միջազգային իրավական դաշտում... Մանավանդ, որ ուսխը դեռ վճգտում էր...

Արցախյան ազատամարտը ընթացավ անկախացած երկրի վերաշինության առաջին քայլերին զուգահեռ: Անկախության խորհրդանիշնե-

րը, պետականության հիմնական հաստատությունները մեկը մյուսի ետեւից դարձան իրողություններ: Տարիներ անց մի նոր աղետ՝ 1999-ի հոկտեմբերի 27-ը փորձեց կասեցնել ստեղծագործ աշխատանքով երկրի վերականգնման գործընթացը... Սակայն, ի պատիվ ժողովրդի, իշխանությունների ու ընդդիմության, ճգնաժամը հաղթահարվեց...

Տարածաշրջանում ամենաժողովրդավարական հասարակությամբ, ամենամարտունակ բանակով, վերականգնվող տնտեսությամբ եւ, ամենակարեւորը, համազգային միասնությամբ՝ Հայաստանը քայլ առ քայլ ամրանում ու մոտենում էր իր ապագային... Սակայն, որեւէ մեկը չէր կարող կանխատեսել այն համազգային աղետը, որ տեղի ունեցավ 2020 թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմով:



Երկու ծաղկով գարուն

Իմ նոր Հայրենիք, Հզոր Հայրենիք...

Հայաստանը արեւելյան եւ արեւմտյան հատվածների առաջին անգամ բաժանվեց 387թ.-ին (Բյուզանդիայի եւ Պարսկաստանի միջեւ): Երկու է, հետագայում տարբեր վարչական բաժանումներ ունեցավ Հայաստանը, վերականգնեց պետականությունը իր պատմական հայրենիքում (922-1045, Բագրատունյաց հարստություն), սակայն այդ, ասես, ճակատագրով նախասահմանված սահմանագիծը այդպես էլ չանհետացավ հայոց երկրի ու քարտեզի վրայից: Հետագայում Բյուզանդիային փոխարինեց Օսմանյան Թուրքիան: 1828 թվականին Արեւելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանին: Արեւմտյան Հայաստանը դատապարտվեց կործանման: 1895-1923թթ. ցեղասպանություններից հետո Արեւմտյան Հայաստանը անալազավ գրեթե ամբողջապես, արեւմտահայությունը սփռվեց աշխարհով մեկ՝ ստեղծելով նոր գաղթօջախներ եւ կամ ստվարացնելով նախկինում եղածները: Հայության երկու հատվածները արդեն կոչվեցին, դարձան

Սփյուռք ու Մայր Հայրենիք... Մեզ բաժանել են, որ տիրեն: Մենք գոյատևելու ենք մեկս մյուսով: Առանց Մայր Հայրենիք՝ Սփյուռքը դատապարտված է ուժացման: Առանց Սփյուռք՝ Հայրենիքը տկար է եւ միայնակ:

Այսօր մենք արդեն ունենք միասին լինելու գիտակցությունը: Չէ, ոչ երկրաշարժը, Արցախյան շարժումը, ազգային Ջարթոնքը բերեց մեզ մեկ ժողովուրդ, մեկ հավատ, մեկ լեզու, մեկ հայրենիք ինքնագիտակցությամբ: Ղարաբաղը արթնացրեց Սփյուռքին, իսկ մեզ հուշեց՝ նրան պահպանելով նրան ապավինելու կարելությունը: Երկրաշարժը, որ ցնցել էր արդեն իսկ ողջ աշխարհը, սրտախուլ գթասրտության ալիք տարածեց սփյուռքով մեկ. այդ ինչպե՞ս, ուրեմն մեր հայրենիքը կարող է եւ չլինե՞լ... Ու Ղարաբաղով արթնացած սփյուռքահայոց ոգին շարժեց նաեւ սիրտը սփյուռքահայոց...


Անշուշտ, դա այդպես է: Բայց մեզ միացնողը, ավելի ճիշտ՝ մեր միջեւ եղած անջատումները (մի ազգի երկու մասերի միջեւ «ջերմ կապեր» հասկացությունն անգամ սառն է հնչում) վերացնողը եղավ մեր ազգա-

յին Ջարթոնքը: Նորից վերաթնացան հայոց երազները, հայոց իդեներն իրագործելի ծրագիր դարձնելու ելքեր որոնվեցին: Հայոց դատի պահանջատիրությունը որչափ Սփյուռքինը, նույնքան եւ ավելի դարձավ Մայր Հայրենիքինը:

Արցախյան ազատամարտում 1992-94 թթ. եւ ապա 2016թ. ապրիլի 2-5-ը տարած մեր փայլուն հաղթանակները էլ ավելի ամրապնդեցին Արցախի անվտանգությունը՝ աննախադեպ ոգեւորություն պարգեւելով աշխարհասփյուռ հայության բոլոր հատվածներին եւ մեզ դարձնելով պատմականորեն միասնական ազգ նաեւ նոր ժամանակներում:

Համազգային Ջարթոնքը դեռ նոր էր սկսել պտուղներ տալ: Իսկ երբ միասին էինք, հաջողություններն ակնհայտ էին... Մանավանդ, երբ հասկացել էինք, որ պիտի ապավինեք միայն մեր սեփական ուժերին... Սփյուռքի եւ Մայր Հայրենիքի միացյալ ուժերով պիտի ամբողջապես մեր կիսատված տունը, շենանար Թուրանյանի երազած մեր «Նոր հայրենիք, հզոր հայրենիք...»:

«Մի ծաղկով գարուն չի գա», - ասում է ժողովուրդը, թեւե եթե ունես



Գեւորգ Մարգարեանու անկուտրում հավատը, կարող է եւ գալ: Իսկ երկու ծաղկով գարունը, մինչեւ վերջին խայտառակ պատերազմը, թվում էր ուր որ է պիտի գա: Հայրենիքի ու Սփյուռքի՝ ամեն ձեռնարկ ու խնդիր

լուծելիս միշտ միասին լինելու դիրքորոշմամբ կկարողանայինք, եւ դեռ պիտի կարողանանք հասնել Հայ դատի պահանջատիրության ցանկալի հանգրվանին եւ, ի վերջո, լուծել Հայկական հարցը:



«Կրթության զարգացման եւ նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադամը հրավիրում է մրցույթի

հիմնադրամի կրթության բովանդակության մշակման վարչության պետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

Կրթության բովանդակության մշակման վարչության պետի հիմնական գործառնությունները՝

1. Իրականացնում է վարչության աշխատանքների կառավարումը եւ ղեկավարումը:
2. Ապահովում է ՀՀ-ի եւ առարկայական չափորոշիչների աշխարհում գործող մոդելների ուսումնասիրությունը:
3. Ապահովում է ՀՀ-ի կարողունակությունների լրամշակումը եւ մեթոդական ուղեցույցների մշակումը:
4. Ապահովում է ՀՀ-ի եւ առարկայական չափորոշիչներում վերջնարդյունների լրամշակումը եւ մեթոդական ուղեցույցների մշակումը:
5. Ապահովում է կրթության բովանդակության բարեփոխումների հիմնադրությունների նախագծի մշակումը:
6. Ապահովում է ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ-ի հենքային ուսումնական պլանից օգտվելու կարիքների գնահատումը:
7. Ապահովում է ՀՀ-ի հենքային ուսումնական պլանի հիման վրա օրինակելի պլանների նախագծերի մշակումը եւ մեթոդական ուղեցույցների նախապատրաստումը:
8. Ապահովում է ՀՀ-ի հենքային ուսումնական պլանի լրամշակումը եւ տեղեկատվական ուղեցույցների մշակումը:
9. Ապահովում է ուսումնական հաստատության աշխատանքների կազմակերպման վրա ՀՀ-ի հենքային ուսումնական պլանի կարգավորումների ազդեցության գնահատումը:
10. Ապահովում է այլընտրանքային ուսումնական պլանի մշակման մեթոդական ուղեցույցների մշակումը:
11. Ապահովում է բնագավառի օրինակելի առարկայացանկի ձեւավորման մեթոդների մշակումը:
12. Ապահովում է բնագավառի օրինակելի առարկայացանկի ձեւավորման ուղեցույցների մշակումը:
13. Ապահովում է ՀՀ-ի եւ առարկայական չափորոշիչների վերջնարդյուններին բնագավառի առարկաների ծրագրերի բովանդակության եւ վերջնարդյուններին համապատասխանության գնահատումը, լրամշակումը:
14. Ապահովում է առարկայի ծրագրի վերջնարդյուններին առարկայի բովանդակության համապատասխանության գնահատումը, լրամշակումը եւ տեղեկատվական ուղեցույցների մշակումը:
